



Հաստատված են Բանկի կողմից
03.06.2024թ. որոշմամբ

UBPAY ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	7
ԳԼՈՒԽ 4. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ.....	9
ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....	12
ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	14
ԳԼՈՒԽ 7. ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	20
ԳԼՈՒԽ 8. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ	22
ԳԼՈՒԽ 9. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔԼԻՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....	23
ԳԼՈՒԽ 10. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	28
ԳԼՈՒԽ 11. ՊՐՈՑԵՍԻՆԳԱՅԻՆ/ՔԼԻՐԻՆԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.....	32
ԳԼՈՒԽ 12. ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	33
ԳԼՈՒԽ 13. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	34
ԳԼՈՒԽ 14. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....	37
ԳԼՈՒԽ 15. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....	41
ԳԼՈՒԽ 16. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	45
ԳԼՈՒԽ 17. ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ	54
ԳԼՈՒԽ 18. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ.....	56
ԳԼՈՒԽ 19. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	57
ԳԼՈՒԽ 20. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	58
ԳԼՈՒԽ 21. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	58

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1** UBPAY Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանվում են Համակարգի գործունեության հիմնական սկզբունքները, Համակարգի միջոցով իրականացվող գործառնությունների տեսակները, Համակարգում կիրառվող սակագնային քաղաքականությունը, պրոցեսինգի, քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման կանոնները, ինչպես նաև Համակարգի սուբյեկտների գործառնությունները, իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, Համակարգին մասնակցության, մասնակցության կասեցման և դադարեցման կարգը, Համակարգում կիրառվող տեխնիկաձրագրային միջավայրը և դրա բաղկացուցիչ մասերը, Համակարգում տեղեկատվական անվտանգության ապահովման կարգը և անվտանգությանը ներկայացվող պահանջները, Համակարգում ռիսկերի կառավարման և Համակարգի գործունեության անընդհատության ապահովման պահանջները, սույն Կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման և դրանցում փոփոխությունների իրականացման կարգը:
- 1.2** Համակարգի գործունեության նպատակը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների համար պատշաճ որակի դրամական փոխանցումների իրականացման ծառայությունների մատուցման կազմակերպումն է:
- 1.3** Համակարգի սուբյեկտներն են հանդիսանում Համակարգի օպերատորը, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնը, Հաշվարկային բանկը և Մասնակիցները:
- 1.4** Համակարգի օպերատոր հանդիսանում է Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Բանկ):
- 1.5** Համակարգի օպերատորը հանդիսանում է նաև Համակարգի Մասնակից:
- 1.6** Սույն Կանոններով սահմանված մասնակցության չափանիշները միևնույնն են Համակարգի բոլոր Մասնակիցների համար:
- 1.7** Համակարգի Մասնակից դառնալու և Համակարգի օպերատորի հետ մասնակցության պայմանագիր կնքելու նպատակով կազմակերպությունը պարտավոր է դիմել Համակարգի օպերատորին՝ սույն Կանոններով սահմանված կարգով:
- 1.8** Համակարգի օպերատորը պատասխանատու է Համակարգի գործունեության կանոնակարգի, այդ թվում նաև՝ սույն Կանոնների մշակման և հաստատման, Կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման, Մասնակիցների հետ մասնակցության պայմանագրերի կնքման, Համակարգի զարգացման, շուկայի ուսումնասիրության, նոր գործիքների, նոր ծառայությունների կիրառման հնարավորությունների ուսումնասիրման և ներդրման համար, նոր ուղղությունների բացահայտման, վճարահաշվարկային համակարգերի նոր օպերատորների, նոր պոտենցիալ մասնակիցների հետ բանակցությունների վարման և վերջիններիս ներգրավման, Համակարգի այլ սուբյեկտների ներգրավման, Համակարգի ապրանքային նշանի տարածման, Համակարգում ռիսկերի գնահատման և կառավարման, Համակարգի անխափան գործունեության ապահովման, Համակարգում տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակման և ապահովման, Համակարգում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, Մասնակիցների և Հաճախորդների դիմումների, դիմում-բողոքների, հարցադրումների ընդունման և սակագնային քաղաքականության մշակման համար:

- 1.9** Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնը պատասխանատու է Մասնակիցների կողմից նախաձեռնված դրամական փոխանցման գործառնությունների հետ կապված տեղեկատվության ընդունման, հավաքագրման, մշակման խմբավորման, պահպանման և փոխանցման, զուտ դեբետային մնացորդի սահմաններում դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնությունների կատարման հսկման, զուտ դեբետային սահմանաչափերի փոփոխման և հաստատման գործընթացների կառավարման, Հաշվարկային բանկում վարվող Մասնակիցների հաշիվներում զուտ դեբետային սահմանաչափերին համապատասխան դրամական միջոցների ստեղծման հանձնարարականների նախաձեռնման, Համակարգում կիրառվող հավաստագրերի ստուգման, վերջիններիս վավերականացման ստուգման նախաձեռնման, ինչպես նաև Մասնակիցների և Համակարգի օպերատորի զուտ դիրքերի հաշվարկման և Հաշվարկային բանկին վերջնահաշվարկի կատարման հանձնարարականի ներկայացման համար:
- 1.10** Հաշվարկային բանկը պատասխանատու է Մասնակիցների և Համակարգի օպերատորի համար Համակարգի կողմից զուտ դեբետային սահմանաչափերին կամ վճարային հաշվի վրա առկա դրամական միջոցներին համապատասխան դրամական միջոցների ստեղծման ապահովման, Համակարգի միջոցով իրականացված դրամական փոխանցման գործառնությունների գծով վերջնահաշվարկի ապահովման համար՝ իր մոտ վարվող Մասնակիցների և Համակարգի օպերատորի վճարային չորս արժույթով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո և ՌԴ ռուբլի հաշիվներով:
- 1.11** Մասնակիցներն ապահովում են Համակարգի միջոցով դրամական փոխանցման գործառնությունների իրականացումը՝ հաճախորդների կողմից ներկայացված դիմումների հիման վրա:
- 1.12** Մասնակիցները պատասխանատվություն են կրում Համակարգի Կանոններով սահմանված պահանջների կատարման համար սույն Կանոններով և վերջիններիս ու Համակարգի օպերատորի միջև կնքված մասնակցության պայմանագրի համաձայն:
- 1.13** Սույն Կանոններով սահմանված պահանջների խախտումը հիմք է հանդիսանում Մասնակցի մասնակցության կամ համագործակցության պայմանագրի լուծման համար:
- 1.14** Սույն Կանոններով սահմանված՝ Համակարգի օպերատորի և Մասնակիցների միջև ուղարկվող ծանուցումները կամ սահմանված այլ տեղեկատվության տրամադրումը կատարվում է Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև կնքված մասնակցության պայմանագրով սահմանված՝ համաձայնեցված կապի միջոցով, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոններով:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Սույն Կանոնների իմաստով՝

- Համակարգ՝ դրամական փոխանցումների իրականացման հայաստանյան միասնական համակարգ, որը գործում է UBPAY անվանմամբ և ապրանքային նշանով և հանդիսանում է դրամական միջոցների փոխանցման, պրոցեսինգի, քլիրինգի իրականացման, վերջնահաշվարկի կատարման ընդհանուր կանոնների և ընթացակարգերի ու վերջիններս ապահովող տեխնիկաճրագրային միջոցների ամբողջություն,
- Հաշվարկային բանկ՝ բանկ, որն ապահովում է Համակարգի միջոցով իրականացված դրամական փոխանցման գործառնությունների արդյունքում Համակարգի մասնակիցների և Համակարգի օպերատորի միջև ծագած դրամական պարտավորությունների վերջնահաշվարկը:

Հաշվարկային բանկի գործառնություններն իրականացնում է Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերությունը՝ իր առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման՝ Հաշվապահական հաշվառման տնօրինության միջոցով,

- Համակարգի օպերատոր՝ կազմակերպություն, որը պատասխանատու է Համակարգի գործունեության կանոնակարգման, այդ թվում նաև՝ սույն Կանոնների մշակման, դրանց պահպանման նկատմամբ հսկողության իրականացման, Մասնակիցների հետ մասնակցության պայմանագրերի կնքման, Համակարգի անխափան գործունեության ապահովման և զարգացման, ինչպես նաև սույն կանոններով Համակարգի օպերատորի համար սահմանված այլ գործառնությունների իրականացման համար: Համակարգի օպերատորի գործառնություններն իրականացնում է Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերությունը,
- Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոն՝ կազմակերպություն, որն իրականացնում է Մասնակիցների կողմից նախաձեռնված դրամական փոխանցման գործառնությունների պրոցեսինգը և քլիրինգը, ինչպես նաև Համակարգի Կանոններով սահմանված այլ գործառնություններ, և ապահովում է Համակարգի տեխնիկաձրագրային համալիրի ադմինիստրավորումը: Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի գործառնություններն իրականացնում է Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերությունը, իր առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման՝ Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրինության միջոցով,
- Վերջնահաշվարկ, պրոցեսինգ, քլիրինգ՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված նշանակության,
- Դրամական փոխանցման գործառնություն՝ Դրամական փոխանցման ուղարկում (Send-money), Դրամական փոխանցման ստացում (Pay-out), Դրամական փոխանցման վերադարձ (Reversal), Դրամական փոխանցման փոփոխում (Amendment) և Դրամական փոխանցման չեղարկում (Cancellation),
- Դրամական փոխանցման ուղարկում (Send-money)՝ Ուղարկողի կողմից նախաձեռնված գործարք և/կամ տրված կարգադրություն, համաձայն որի պետք է իրականացվի դրամական միջոցների փոխանցում Ուղարկողից Ստացողին,
- Դրամական փոխանցման ստացում (Pay-out)՝ Ստացողի կողմից նախաձեռնված գործարք և/կամ կարգադրություն, համաձայն որի իրականացվում է նախաձեռնված դրամական փոխանցման տրամադրում Ստացողին,
- Դրամական փոխանցման փոփոխում (Amendment)՝ Ուղարկողի կողմից նախաձեռնված գործարք և/կամ կարգադրություն, համաձայն որի իրականացվում է նախաձեռնված, բայց Ստացողին դեռևս չտրամադրված դրամական փոխանցման պայմանների՝ սույն կանոններով սահմանված փոփոխություն,
- Դրամական փոխանցման վերադարձ (Reversal/Return)՝ Ուղարկողի կողմից նախաձեռնված գործարք և/կամ կարգադրություն, համաձայն որի իրականացվում է նախաձեռնված դրամական փոխանցման գումարի վերադարձ Ուղարկողին, եթե սույն կանոններով

սահմանված ժամկետում դրամական փոխանցումը չի տրամադրվել Ստացողին՝ Ստացողի պահանջի և/կամ կարգադրության բացակայության պատճառով,

- Դրամական փոխանցման չեղարկում (Cancellation)՝ Ուղարկողի կամ Ուղարկող կողմի կամ Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ իրականացվող գործարք և/կամ կարգադրություն, համաձայն որի իրականացվում է նախաձեռնված, բայց Ստացողին դեռևս չտրամադրված դրամական փոխանցման գործառնության դադարեցում/չեղարկում՝ Ուղարկողին վերջինիս կողմից տրամադրված Դրամական փոխանցման գումարը վերադարձնելու պայմանով,
- Մասնակից՝ Հաշվարկային բանկում վճարային հաշիվ ունեցող Հայաստանյան բանկ, Հայաստանյան վճարահաշվարկային կազմակերպություն կամ արտասահմանյան բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպություն, ինչպես նաև այն կազմակերպությունը, որն իր երկրի օրենսդրության համաձայն իրավունք ունի մատուցելու վճարահաշվարկային և/կամ նմանատիպ ծառայություններ, որը Համակարգի օպերատորի հետ կնքել է Համակարգում մասնակցության պայմանագիր և որի կողմից Համակարգի միջոցով իրականացված դրամական փոխանցման գործառնությունների գծով վերջնահաշվարկն իրականացվում է Հաշվարկային բանկում իր անունով բացված վճարային հաշվի միջոցով,
- Հայաստանյան բանկ՝ ՀՀ օրենսդրության համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության իրականացման համար լիցենզիա ստացած բանկ կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված օտարերկրյա բանկի մասնաճյուղ,
- Հայաստանյան վճարահաշվարկային կազմակերպություն՝ ՀՀ օրենսդրության համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային ծառայությունների մատուցման համար լիցենզիա ստացած վճարահաշվարկային կազմակերպություն,
- Մասնակցի սպասարկման կետ՝ Մասնակցի գլխամասային գրասենյակ կամ մասնաճյուղ կամ տարածքային ստորաբաժանում կամ ցանկացած այլ սպասարկման կետ, որտեղից կամ որի միջոցով Հաճախորդները կարող են նախաձեռնել Դրամական փոխանցման գործառնություններ,
- Համակարգի սուբյեկտ՝ Համակարգի օպերատոր, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոն, Հաշվարկային բանկ, Մասնակիցներ,
- Համակարգի API (Application Programming Interface)՝ ստանդարտացված կանոնների և մեթոդների ամբողջություն, որի միջոցով ապահովվում է Համակարգի սուբյեկտների միջև տվյալների փոխանակումը՝ համապատասխան տեխնիկաճրագրային միջոցների կիրառմամբ,
- Ուղարկող կողմ՝ այն Մասնակիցը, ում միջոցով Ուղարկողի դիմումի հիման վրա նախաձեռնում է Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money),
- Ստացող կողմ՝ այն Մասնակիցը, ում միջոցով իրականացվում է դրամական փոխանցման տրամադրում Ստացողին,
- Ուղարկող՝ անձ, ով նախաձեռնում է Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money) և դիմում է ներկայացնում Ուղարկող կողմին,
- Ստացող՝ անձ, ով հանդիսանում է փոխանցվող գումարի հասցեատերը,

- Հաճախորդ՝ Ուղարկող և/կամ Ստացող,
- Դրամական փոխանցման գործառնության հաստատում՝ Մասնակցի կողմից նախաձեռնած Դրամական փոխանցման գործառնության կատարման թույլտվության տրամադրում Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կողմից,
- Աշխատանքային օր՝ շաբաթվա բոլոր օրերը, բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի և «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերի, ինչպես նաև Համակարգի օպերատորի կողմից որպես «աշխատանքային» սահմանված այլ օրերը, որոնք Համակարգի մասնակիցների պարտավորություններին առնչվելու դեպքում նախապես համաձայնեցվում են Մասնակիցների հետ,
- Հաշվարկային փուլ՝ սույն Կանոններով սահմանված ժամանակահատված, որի կտրվածքով հաշվարկվում են Մասնակիցներին Համակարգի օպերատորի զուտ դիրքերը և այնուհետ իրականացվում է վերջնահաշվարկ,
- Զուտ դեբետային սահմանաչափ՝ Հաշվարկային փուլի շրջանակներում վերջնահաշվարկն ապահովելու համար յուրաքանչյուր Մասնակցի կողմից իր համար սահմանված սառեցվող (դեպոնացվող) գումարի չափ, որի հիման վրա որոշվում է Մասնակցի կողմից Համակարգում Դրամական փոխանցման ուղարկում (Send-money) կատարելու հնարավորությունը,
- Զուտ դեբետային պարտավորություն՝ Հաշվարկային փուլի շրջանակներում տվյալ պահի դրությամբ յուրաքանչյուր Մասնակցի՝ Համակարգի օպերատորի հանդեպ ունեցած պարտավորության կամ պահանջի չափ,
- Զուտ դեբետային մնացորդ՝ Հաշվարկային փուլի շրջանակներում տվյալ պահի դրությամբ Մասնակցի՝ Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) կատարման համար հասանելի գումար,
- Անվերադարձելիության պահ՝ այն պահը, որից հետո անհնար է չեղարկել կամ փոփոխել Համակարգ մուտքագրված և հաստատված Դրամական փոխանցման դիմումը,
- Եզակի հղման համար՝ դրամական փոխանցման նույնականացման համար, որը ձևավորվում է Համակարգի կողմից ավտոմատ եղանակով՝ Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության հաստատման դեպքում,
- Հաճախորդի միջնորդավճար՝ Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) համար նախաձեռնման պահին Ուղարկողից գանձվող գումար՝ ի լրումն Դրամական փոխանցման գումարի,
- Դրամական փոխանցման գումար՝ գումար, որն ենթակա է տրամադրման Ստացողին,
- Ահաբեկչության հետ կապված անձ՝ ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձ, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի

բանաձևերով կամ դրանց համաձայն կամ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած ցանկերում,

- Փողերի լվացում՝ Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում),
- Զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձ՝ ցանկացած անձ, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման և (կամ) դրա ֆինանսավորման համար թիրախային ֆինանսական պատժամիջոցներ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում,
- Գաղտնիք համարվող տեղեկություններ՝ Կողմերից մեկի առևտրային գաղտնիքը, բանկային գաղտնիքը կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք, ինչպես նաև հաճախորդների, դրամական փոխանցումների, համապատասխան հաշիվների մնացորդների և գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները և այն տեղեկատվությունը, որը ՀՀ օրենսդրությամբ դասակարգված է որպես գաղտնի,
- Համակարգի հետ ինտեգրում՝ Համակարգի կանոններով տեխնիկական, անվտանգության, ադմինիստրավորման, համապատասխանության, ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի գործընթացների ապահովման, ինչպես նաև Համակարգի կանոններով և ՀՀ օրենսդրությամբ պարտադիր գործընթացների նախագծման, ծրագրավորման, թեստավորման, ադմինիստրավորման և սպասարկման կազմակերպման աշխատանքներ՝ Համակարգում Մասնակցի գործարկման նպատակով:
- Համակարգի հետ գործարկում՝ Համակարգի հետ ինտեգրման բոլոր աշխատանքների ավարտից հետո դրանց արձանագրման արդյունքում Մասնակցի միացումը Համակարգին:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 3.1** Մասնակցի ու Համակարգի օպերատորի միջև մասնակցության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո սույն Կանոններով սահմանված բոլոր պահանջներն ենթակա են անվերապահ կատարման Մասնակցի կողմից:
- 3.2** Համակարգի օպերատորը հրապարակում է Մասնակիցների ցանկը և թարմացնում է այն՝ փոփոխությունների առաջացման դեպքում՝ Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ www.ubpay.am:

3.3 Համակարգի Մասնակից դառնալու համար անհրաժեշտ է Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև կնքված մասնակցության պայմանագրի առկայություն:

3.4 Համակարգի Մասնակիցը պետք է.

- իր երկրի իրավասու մարմնի կողմից ստացած լինի թույլտվություն/լիցենզիա վճարահաշվարկային ծառայությունների և/կամ նմանատիպ ծառայությունների մատուցման կամ վճարահաշվարկային համակարգի օպերատորի գործունեության իրականացման համար կամ ունենա նման իրավասություն Մասնակցի երկրի օրենսդրության համաձայն,
- Իրականացնի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցառումներ, որի շրջանակներում կատարվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն և հաճախորդների տվյալների ստուգման/համադրման միջոցառումներ տարբեր միջազգային և ներքին ցանկերի հետ,
- հնարավորություն ունենա աշխատել Համակարգում օգտագործվող ծրագրային ապահովման միջոցով և բավարարի Համակարգի օպերատորի կողմից սահմանված պահանջները,
- բավարարի սույն Կանոններով սահմանված տեղեկատվության անվտանգության ապահովման պահանջները,
- ապահովի գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանումը և դրանց չհրապարակումը,
- չունենա ժամկետանց վարկային, հարկային և այլ տեսակի պարտավորություններ,
- ունենա առանձնացված ստորաբաժանում կամ նշանակված լիազոր անձ, որը պատասխանատու կլինի Համակարգի օպերատորի հետ համագործակցության համար:

3.5 Համակարգի Մասնակից դառնալու նպատակով հավակնորդ կազմակերպությունը Համակարգի օպերատորին է ներկայացնում համապատասխան դիմում և այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

3.6 Համակարգի օպերատորը Մասնակցի հետ կնքում է գաղտնիության պայմանագիր, նախքան Մասնակցության կամ համագործակցության պայմանագրի կնքելը:

3.7 Համակարգի օպերատորը հավաքագրում է Մասնակցի հետ հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալները, Մասնակցի հետ հստակեցնում է ծառայությունների մատուցման պայմանները, ծածկույթը, Վերջնահաշվարկի համար անհրաժեշտ գործընթացները, Համակարգին միացման տեխնիկական պարամետրերը, գրանցում է Մասնակցին Համակարգում, այդ թվում՝ վերջինիս սպասարկման կետերը:

3.8 Համակարգի օպերատորի հետ կնքվող մասնակցության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը 10 (տասը) օրվա ընթացքում Մասնակիցը նախաձեռնում է իր սպասարկման կետերի գրանցման գործընթացը՝ Համակարգի օպերատորին տրամադրելով իր սպասարկման կետերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: Մասնակցի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա Համակարգի օպերատորն ապահովում է Մասնակցի սպասարկման կետերի գրանցումը Համակարգում:

3.9 Եթե Մասնակցի կողմից Համակարգում գրանցված սպասարկման կետի գործունեությունը դադարում է, ապա Մասնակիցը պարտավոր է իր սպասարկման կետի գործունեության

պլանավորվող դադարեցումից առնվազն 10 (տասը) օր առաջ Համակարգի օպերատորին գրավոր ձևով տրամադրել դրա վերաբերյալ տեղեկատվություն: Մասնակցի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա Համակարգի օպերատորն ապահովում է Մասնակցի սպասարկման կետի հեռացումը Համակարգում գրանցված սպասարկման կետերի ցանկից՝ սպասարկման կետի գործունեության դադարեցման պլանավորված օրվանից սկսած:

3.10 Մասնակիցը կարող է նախաձեռնել Համակարգում գրանցված իր սպասարկման կետերի ցանկում նոր սպասարկման կետի ավելացում՝ Համակարգի օպերատորին տրամադրելով իր նոր սպասարկման կետի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը նոր սպասարկման կետի գործունեության պլանավորվող օրվանից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ՝ Համակարգի օպերատորի և Մասնակցի հետ համաձայնեցված ձևաչափով: Մասնակցի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա Համակարգի օպերատորն ապահովում է Մասնակցի նոր սպասարկման կետի գրանցումը Համակարգում:

3.11 Մասնակիցը կարող է նախաձեռնել Համակարգում գրանցված սպասարկման կետերի վերաբերյալ առկա տեղեկատվության փոփոխություն՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 5 Աշխատանքային օր առաջ՝ Համակարգի օպերատորին տրամադրելով իր սպասարկման կետի վերաբերյալ անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը՝ Համակարգի օպերատորի էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով: Մասնակցի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա Համակարգի օպերատորն ապահովում է Մասնակցի սպասարկման կետի վերաբերյալ տեղեկատվության փոփոխությունը Համակարգում:

3.12 Մասնակցի՝ Համակարգին միացումն ապահովելու նպատակով Մասնակցին տրամադրվում են հավաստագրեր՝ Համակարգի օպերատորի և Մասնակցի հետ համաձայնեցված եղանակով:

ԳԼՈՒԽ 4. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Մասնակցության ժամանակավոր կասեցում

4.1 Համակարգում մասնակցությունը կարող է ժամանակավորապես կասեցվել.

4.1.1 Մասնակցի նախաձեռնությամբ՝ Համակարգի օպերատորին գրավոր տեղեկացնելու միջոցով՝ մասնակցության պլանավորվող կասեցումից առնվազն 10 (տասը) օր առաջ կամ անհապաղ լուծում պահանջող տեխնիկական խնդիրների դեպքում՝ անմիջապես,

4.1.2 Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ՝ գրավոր ձևով 10 (տասը) օր առաջ Մասնակցին տեղեկացնելով մասնակցության կասեցման վերաբերյալ, հետևյալ դեպքերում

- Մասնակցի կողմից սույն Կանոններով սահմանված պահանջների խախտման դեպքում,
- Համակարգի օպերատորի կողմից հայցվող տեղեկությունների չտրամադրման կամ անարժանահավատ տեղեկությունների տրամադրման դեպքում,
- Սույն գլխով սահմանված մասնակցության չափանիշներին չբավարարման դեպքում,

- Մասնակցի գործունեության կամ անգործության արդյունքում Համակարգի գործունեության անխափանության խախտման դիսկի առաջացման դեպքում,
- Մասնակցի գործունեության մեջ անբարենպաստ փոփոխությունների առաջացման դեպքում, այդ թվում նաև՝ ֆինանսական վիճակի, գործարար գործընթացների, ծառայությունների որակի վատթարացման դեպքերում,
- Մասնակցի երկրի իրավասու մարմնի կողմից Մասնակցին տրամադրված թույլտվության/լիցենզիայի կասեցման դեպքում:

4.2 Եթե մասնակցությունը կասեցվել է Մասնակցի նախաձեռնությամբ, ապա Մասնակցի մասնակցությունը Համակարգին կարող է վերականգնվել և Մասնակցի կողմից Համակարգի միջոցով իրականացվող Դրամական փոխանցման գործառնությունները կարող են վերսկսվել՝ Մասնակցի կողմից Համակարգի օպերատորին գրավոր ձևով համապատասխան տեղեկացման ուղարկումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Համակարգի օպերատորը տալիս է Մասնակցի մասնակցության վերականգնման համար իր համաձայնությունը:

4.3 Եթե մասնակցությունը կասեցվել է Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ, ապա մասնակցությունը կարող է վերականգնվել Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ՝ դրա մասին Համակարգի օպերատորի կողմից Մասնակցին գրավոր ձևով համապատասխան տեղեկացման ուղարկումից հետո՝ մասնակցության պլանավորվող վերականգնումից առնվազն 5 Աշխատանքային օր առաջ և պայմանով, որ վերացվել են մասնակցության ժամանակավոր կասեցման պատճառները:

4.4 Մասնակցի մասնակցությունը Համակարգին կարող է կասեցվել առավելագույնը 3 ամիս ժամկետով: Այն դեպքում, եթե մասնակցության կասեցումից հետո 3 ամիս անց համապատասխան կասեցման հիմքերը/պատճառները չեն վերացվում, ապա Մասնակցի մասնակցությունը Համակարգին դադարեցվում է:

4.5 Մասնակցության ժամանակավոր կասեցման դեպքում՝ Մասնակցիցը պարտավոր է ապահովել Դրամական փոխանցումների տրամադրումը Ստացողին (Pay-out) և կատարել Դրամական փոխանցման փոփոխման (Amendment), Դրամական փոխանցման չեղարկման (Cancellation) և Դրամական փոխանցման վերադարձի (Reversal) գործառնությունները մինչև մասնակցության դադարեցման օրը ներառյալ, եթե տվյալ փոխանցումները կատարվել են մինչև մասնակցության ժամանակավոր կասեցման օրը:

4.6 Մասնակցիցը դադարում է ընդունել Հաճախորդների Դրամական փոխանցման ուղարկում (Send-money) գործառնությունները՝ մասնակցության ժամանակավոր կասեցման պահից սկսած:

Մասնակցության դադարեցում

4.7 Համակարգում մասնակցության դադարեցումն ենթադրում է Մասնակցի և Համակարգի օպերատորի միջև կնքված մասնակցության պայմանագրի լուծում և Մասնակցի և Համակարգի օպերատորի իրավունքների և պարտականությունների դադարեցում:

4.8 Համակարգում Մասնակցի մասնակցությունը կարող է դադարեցվել Մասնակցի նախաձեռնությամբ՝ գրավոր ձևով Համակարգի օպերատորին տեղեկացնելով մասնակցության պլանավորվող դադարեցումից առնվազն 3 (երեք) ամիս առաջ և Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ՝ գրավոր ձևով Մասնակցին տեղեկացնելով մասնակցության պլանավորվող դադարեցումից առնվազն 3 (երեք) ամիս առաջ:

4.9 Համակարգի օպերատորը կարող է դադարեցնել Մասնակցի մասնակցությունը Համակարգին անմիջապես՝ հետևյալ դեպքերում՝

- Մասնակցի կողմից սույն Կանոններով սահմանված պահանջների խախտման դեպքում,
- Մասնակցի կողմից կասկածելի և անօրինական գործարքներում ներգրավման և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտման դեպքում,
- Մասնակցի երկրի իրավասու մարմնի կողմից Մասնակցին տրամադրված թույլտվության/լիցենզիայի ուժը կորցրած ճանաչման կամ Մասնակցի՝ օրենքով տրամադրված իրավասության դադարեցման դեպքում,
- Մասնակցի երկրի օրենսդրության համաձայն՝ Մասնակցի նկատմամբ սնանկության գործընթաց սկսելու դեպքում,
- Մասնակցի երկրի իրավասու մարմնի կողմից տվյալ երկրի տարածքում Համակարգի գործունեության դադարեցման որոշում կայացնելու դեպքում,

4.10 Սույն Կանոնների 4.8 կետով սահմանված մասնակցության դադարեցման դեպքում՝ Մասնակցը դադարում է ընդունել Հաճախորդների Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) դիմումները մասնակցության պլանավորվող դադարեցումից 15 օր առաջ:

4.11 Սույն Կանոնների 4.9 կետով սահմանված մասնակցության դադարեցման դեպքում՝ Համակարգի օպերատորի կողմից սահմանված մասնակցության դադարեցման օրը Մասնակցը դադարում է ընդունել Հաճախորդների Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) դիմումները:

4.12 Սույն Կանոնների 4.8 և 4.9 կետերով Մասնակցության դադարեցման դեպքում՝ Մասնակցը պարտավոր է ապահովել Դրամական փոխանցումների տրամադրումը Ստացողին (Pay-out) և կատարել Դրամական փոխանցման փոփոխման (Amendment), Դրամական փոխանցման չեղարկման (Cancellation) և Դրամական փոխանցման վերադարձի (Reversal) գործառնությունները մինչև մասնակցության դադարեցման օրը ներառյալ:

4.13 Մասնակցության դադարեցման օրվանից հետո տվյալ մասնակցին առնչվող Դրամական փոխանցման փոփոխման (Amendment), Դրամական փոխանցման չեղարկման (Cancellation) և Դրամական փոխանցման վերադարձի (Reversal) գործառնությունների իրականացումը կատարվում է Համակարգի օպերատորի կողմից՝ Հաճախորդի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5.1 Համակարգի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները լինում են հետևյալ տեսակների.

5.1.1 Ֆիզիկական անձանց կողմից կանխիկ եղանակով, առանց բանկային հաշվի բացման նախաձեռնված դրամական փոխանցում, որն ենթակա է տրամադրման այլ ֆիզիկական անձին կանխիկի միջոցով,

5.1.2 Ֆիզիկական անձանց կողմից կանխիկ եղանակով, առանց բանկային հաշվի բացման նախաձեռնված դրամական փոխանցում, որը ենթակա է տրամադրման այլ ֆիզիկական անձին վերջինիս բանկային հաշվին կամ վճարային քարտին փոխանցելու միջոցով (այսուհետ՝ անկանխիկ եղանակով տրամադրում):

5.2 Համակարգի միջոցով հնարավոր է իրականացնել կանխիկից կանխիկ դրամական փոխանցման հետևյալ գործառնությունները.

5.2.1 Դրամական փոխանցման ուղարկում (Send-money),

5.2.2 Դրամական փոխանցման ստացում (Pay-out),

5.2.3 Դրամական փոխանցման վերադարձ (Reversal),

5.2.4 Դրամական փոխանցման փոփոխում (Amendment),

5.2.5 Դրամական փոխանցման չեղարկում (Cancellation):

5.3 Համակարգի միջոցով հնարավոր է իրականացնել կանխիկից անկանխիկ եղանակով՝ դրամական փոխանցման ուղարկման (Send-money) և փոխանցման ստացման (Pay-out) գործառնությունները:

5.4 Ստացողին կանխիկ եղանակով տրամադրման ենթակա փոխանցումներն անհասցե են, այսինքն դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության ժամանակ չի նշվում այն Մասնակիցը, որի սպասարկման կետերից Ստացողը կարող է ստանալ փոխանցումը, բայց անպայմանորեն նշվում է այն երկիրը, որտեղից նախատեսվում է ստանալ դրամական փոխանցումը:

5.5 Ստացողին անկանխիկ եղանակով տրամադրման ենթակա փոխանցումները հասցեական են, այսինքն դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության ժամանակ նշվում է Ստացողի երկիրը և Մասնակիցը, որը վարում է Ստացողի համապատասխան հաշիվը, որի վրա կատարվելու է փոխանցումը:

5.6 Ստացողին կանխիկ եղանակով տրամադրման ենթակա փոխանցման դեպքում՝ Ստացողը կարող է իրական ժամանակում ստանալ դրամական փոխանցումը Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության ժամանակ նշված ստացող երկրում գտնվող Համակարգի ցանկացած Մասնակցի սպասարկման կետերից:

5.7 Անկանխիկ եղանակով տրամադրման ենթակա փոխանցման դեպքում՝ փոխանցման գումարն իրական ժամանակում հասանելի է դառնում Ստացողի համապատասխան հաշվին:

5.8 Համակարգի միջոցով իրականացվում են դրամական փոխանցումներ հետևյալ արժույթներով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի: Համակարգում ցանկացած

եղանակով Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնությունների գծով գործում են որոշակի սահմանափակումներ:

5.9 Մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել.

- 5 000 000 (հինգ միլիոն) դրամը, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ՀՀ դրամով,
- 10 000 (տասը հազար) ԱՄՆ դոլարը, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ԱՄՆ դոլարով.
- 10 000 (տասը հազար) եվրոն, եթե դրամական փոխանցումն իրականացվում է եվրոյով,
- 500 000 (հինգ հարյուր հազար) ռուսական ռուբլին, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ռուսական ռուբլով:

5.10 Մեկ գործարքի գումարը չի կարող պակաս լինել.

- 1 000 (մեկ հազար) դրամից, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ՀՀ դրամով,
- 2 (երկու) ԱՄՆ դոլարից, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ԱՄՆ դոլարով.
- 2 (երկու) եվրոյից, եթե դրամական փոխանցումն իրականացվում է եվրոյով,
- 100 (մեկ հարյուր) ռուսական ռուբլուց, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ռուսական ռուբլով:

5.11 Ամսական կտրվածքով մեկ անձի կողմից փոխանցվող ընդհանուր գումարը չի կարող գերազանցել.

- 20 000 000 (քսան միլիոն) դրամը, կամ
- 50 000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարը, կամ
- 50 000 (հիսուն հազար) եվրոն, կամ
- 5 000 000 (հինգ միլիոն) ռուսական ռուբլին:

5.12 Սույն Կանոններով սահմանված սահմանափակումներից բացի Համակարգի օպերատորը կարող է սահմանել «Send money» «Pay-out» դրամական փոխանցման գործառնությունների լրացուցիչ սահմանափակումներ, որոնց մասին Մասնակիցներին Համակարգի օպերատորի կողմից տեղեկացվում է այդ սահմանափակումների ուժի մեջ մտնելուց առնվազն 10 (տասը) օր առաջ:

5.13 Եթե Մասնակցի երկրի օրենսդրությամբ կամ վերջինիս ներքին կանոններով և ընթացակարգերով սահմանված են սույն Կանոններով սահմանված սահմանափակումներից տարբերվող այլ սահմանափակումներ, ապա գործում է ավելի խիստ սահմանափակումը: Նման սահմանափակումների վերաբերյալ Մասնակիցը տեղեկացնում է Համակարգի օպերատորին մասնակցության պայմանագիրը ստորագրելիս:

5.14 Եթե 5.13 կետում նշված սահմանափակումներն ընդունվում են մասնակցության պայմանագիրը ստորագրելուց հետո, ապա Մասնակիցը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Համակարգի օպերատորին՝ սահմանափակումներն ուժի մեջ մտնելուց առնվազն 5 (հինգ) օր առաջ: Համակարգի օպերատորը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ (միջոցառումներ) սահմանափակումների կիրառումն ապահովելու համար և միաժամանակ ծանուցել այդ մասին Մասնակիցներին:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

- 6.1** Մասնակիցները պարտավոր են Հաճախորդներին պատշաճ ձևով տեղեկացնել դրամական փոխանցման գործառնությունների իրականացման հետևյալ պայմանների վերաբերյալ.
- 6.1.1** Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, որը Հաճախորդը պարտավոր է ներկայացնել դրամական փոխանցման գործառնություն նախաձեռնելու համար, և դրանց ներկայացման կարգը,
- 6.1.2** Այն երկրների և այն Մասնակիցների ցանկը, որոնց սպասարկման կետերից Հաճախորդները կարող են նախաձեռնել Դրամական փոխանցման գործառնությունը,
- 6.1.3** Սույն Կանոններով կամ Մասնակցի երկրի օրենսդրությամբ կամ Մասնակցի ներքին ընթացակարգերով սահմանված լինելու դեպքում՝ դրամական փոխանցման գումարի նվազագույն և առավելագույն չափը, ինչպես նաև այլ սահմանափակումները,
- 6.1.4** Հաճախորդի միջնորդավճարների չափը և արժույթը,
- 6.1.5** Դրամական փոխանցումների իրականացման արժույթները,
- 6.1.6** Ուղարկողի կողմից նախաձեռնված դրամական փոխանցման ստացման առավելագույն ժամկետների մասին, որից հետո անհնար է դառնում տվյալ փոխանցման ստացումը,
- 6.1.7** Դրամական փոխանցման վերադարձի (Reversal), Դրամական փոխանցման փոփոխման (Amendment), Դրամական փոխանցման չեղարկման (Cancellation) ընթացակարգերի, պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
- 6.1.8** Այն տեղեկությունների ցանկը, որն Ուղարկողը պետք է տրամադրի Ստացողին, որպեսզի վերջինս ստանա դրամական փոխանցումը,
- 6.1.9** Հաճախորդի կողմից դիմում-բողոքների ներկայացման կարգը՝ կապված Մասնակցի կողմից մատուցված ծառայությունների, կատարված կամ չկատարված գործողությունների հետ,
- 6.1.10** Մասնակցի կողմից ծառայության ոչ ժամանակին մատուցման կամ մասնակի մատուցման կամ անհրաժեշտ գործողությունների չկատարման դեպքում Հաճախորդի վնասի հատուցման և վեճերի լուծման կարգը,
- 6.1.11** Հաճախորդին յուրաքանչյուր դրամական փոխանցման գործառնության կատարման վերաբերյալ անդորրագրի պարտադիր տրամադրման վերաբերյալ տեղեկատվություն,
- 6.1.12** Մասնակցի երկրի օրենսդրությամբ կամ Մասնակցի ներքին ընթացակարգերով սահմանված այլ տեղեկատվություն:
- 6.2** Սույն Կանոնների 6.1 կետով սահմանված տեղեկատվությունը համարվում է պատշաճ ձևով տրամադրված, եթե տրամադրվում/ներկայացվում է Հաճախորդին մատչելի և հասկանալի ձևով՝ Մասնակցի սպասարկման կետերում դրա տեղադրման (թերթոնների, տեղեկատվական ստենդների վրա փակցնելու և այլ միջոցներով) և/կամ Մասնակցի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրման միջոցով՝ Մասնակցի երկրի պետական լեզվով/լեզուներով, ինչպես նաև հնարավորության դեպքում՝ այլ լեզուներով և:
- 6.3** Ուղարկող կողմը նախաձեռնում է Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնություն՝ Ուղարկողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

6.4 Ուղարկող կողմը դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնությունը նախաձեռնելիս պարտավոր է.

6.4.1 Իրականացնել Ուղարկողի նույնականացումը և ինքնության ստուգումը վերջինիս կողմից տրամադրված արժանահավատ և վավեր անձը հաստատող փաստաթղթերի հիման վրա՝ Ուղարկող կողմի երկրի օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված կարգով,

6.4.2 Ուղարկողին մինչև գործարքի կատարումը բանավոր կամ գրավոր ձևով տեղեկացնել.

- Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության հնարավոր արժույթների և Ստացողին դրամական փոխանցման վճարման հնարավոր արժույթների վերաբերյալ,
- Հաճախորդի միջնորդավճարի չափը և արժույթը,
- Այն Մասնակիցների ցանկը, որոնց սպասարկման կետերից Ստացողը կարող է ստանալ դրամական փոխանցումը,
- Իր կամ Համակարգի այլ Մասնակիցների մասնակցության պլանավորված կասեցման կամ դադարեցման մասին (ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում), եթե հնարավոր է սահմանափակվի Ուղարկողի կողմից իրականացվող Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության հետ կապված հետագայում իրականացվելիք Դրամական փոխանցման այլ գործառնությունների (Դրամական փոխանցման ստացում (Pay-out), Դրամական փոխանցման վերադարձ (Reversal), Դրամական փոխանցման փոփոխում (Amendment) և Դրամական փոխանցման չեղարկում (Cancellation)) իրականացումը,
- Սույն Կանոններով կամ Ուղարկող կողմի երկրի օրենսդրությամբ կամ ներքին ընթացակարգերով սահմանված լինելու դեպքում՝ դրամական փոխանցման գործառնությունների իրականացման սահմանափակումները:

6.4.3 Ուղարկողից ստանալ դրամական փոխանցման դիմումը, որի համար Ուղարկողի կողմից ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի հիման վրա էլեկտրոնային եղանակով լրացնել Դրամական փոխանցման դիմումը՝ Ուղարկողից ստանալով առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

- Ստացողի երկիրը,
- Դրամական փոխանցման գումարը և արժույթը,
- Անկանխիկ եղանակով տրամադրման դեպքում՝ բանկային հաշվի կամ վճարային քարտի հաշվի համարը և Ստացող կողմի անվանումը,
- Ուղարկողի անունը/ազգանունը կամ անվանումը, հեռախոսի համարը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
- Ստացողի անունը/ազգանունը կամ անվանումը,
- Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) նպատակը,

- Այլ տվյալներ, որոնք պարտադիր են Մասնակցի երկրի օրենսդրությամբ:
- 6.4.4** Դրամական փոխանցման դիմումը տրամադրել Ուղարկողին՝ նշված տեղեկատվությունը ստուգելու և Դրամական փոխանցման դիմումը ստորագրելու նպատակով,
- 6.4.5** Ստանալ Ուղարկողի կողմից ստորագրված դրամական փոխանցման դիմումը,
- 6.4.6** Ուղարկողից ստանալ դրամական փոխանցման գումարը և Հաճախորդի միջնորդավճարը, տրամադրել Դրամական փոխանցման անդորրագիրը,
- 6.4.7** Տրամադրել Ստացողի կողմից դրամական փոխանցման ստացման (Pay-out) համար պահանջվող ամբողջ տեղեկատվությունը:
- 6.5** Ուղարկող կողմը մերժում է Հաճախորդի դրամական փոխանցման ուղարկման (Send-money) դիմումը, եթե.
- Ուղարկող կողմի երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված դեպքերում հնարավոր չէ իրականացնել Ուղարկողի նույնականացում և ինքնության ստուգում արժանահավատ և վավեր անձը հաստատող փաստաթղթերի հիման վրա,
 - առկա է համընկնում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերի հետ:
- 6.6** Ստացող կողմն իրականացնում է դրամական փոխանցման գումարի տրամադրում Ստացողին՝ Ստացողի կողմից ներկայացված դրամական փոխանցման ստացման դիմումի հիման վրա, եթե դրամական փոխանցումը ենթակա է տրամադրման Ստացողին կանխիկ եղանակով:
- 6.7** Եթե դրամական փոխանցումն ենթակա է տրամադրման Ստացողին կանխիկ եղանակով, Ստացող կողմը դրամական փոխանցման տրամադրումից առաջ պարտավոր է.
- 6.7.1.1** գտնել և ստուգել դրամական փոխանցման կարգավիճակը՝ Ստացողի կողմից տրամադրված եզակի հղման համարի՝ Համակարգ մուտքագրման միջոցով,
- 6.7.1.2** իր երկրի օրենսդրության համաձայն նույնականացնել Ստացողին,
- 6.7.1.3** Ստացողից ստանալ Դրամական փոխանցման ստացման դիմումը, որի համար Ստացողի կողմից ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի հիման վրա էլեկտրոնային եղանակով լրացնել Դրամական փոխանցման ստացման դիմումը՝ Ստացողից ստանալով առնվազն հետևյալ տեղեկատվությունը.
- Ստացողի անունը/ազգանունը,
 - Ստացողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
 - Ստացողի հեռախոսի համարը:
- 6.7.1.4** Դրամական փոխանցման ստացման դիմումը տրամադրել Ստացողին՝ փաստաթղթում նշված տեղեկատվությունը ստուգելու և Դրամական փոխանցման ստացման դիմումը ստորագրելու նպատակով,

6.7.1.5 Դրամական փոխանցման ստացման անդորրագիրը և Դրամական փոխանցման գումարը տրամադրել Ստացողին, իսկ Դրամական փոխանցման ստացման դիմումը պահել իր մոտ:

6.8 Եթե դրամական փոխանցումն ենթակա է տրամադրման Ստացողին կանխիկ եղանակով, ապա դրամական փոխանցման գումարը կարող է տրամադրվել Ստացողին, եթե.

- Եզակի հղման համարի հիման վրա գտնվում է դրամական փոխանցումը, որը դեռևս չի տրամադրվել Ստացողին,
- ներկայացվել է Ստացողի անձը հաստատող փաստաթուղթ,
- ներկայացվել են դրամական փոխանցման ստացման երկրի օրենսդրությանը համապատասխան այլ անհրաժեշտ փաստաթղթերը,
- Ստուգվել է Ստացողի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը Ուղարկող կողմի կողմից դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության նախաձեռնման ժամանակ Համակարգ մուտքագրված տվյալների հետ:

6.9 Սույն Կանոնների 6.8 կետի վերջին պարբերությունում նշված դրամական փոխանցման վերաբերյալ տեղեկատվության անհամապատասխանության դեպքում՝ Ստացող կողմը պարտավոր է մերժել Ստացողի՝ դրամական միջոցները ստանալու պահանջը/դիմումը, բացառությամբ սույն Կանոնների 6.10 կետով սահմանված դեպքերի:

6.10 Դրամական փոխանցման տրամադրումը Ստացողին իրականացվում է նաև այն դեպքում, երբ անհամապատասխանությունները, հետևյալ բովանդակության են.

6.10.1 Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության նախաձեռնման ժամանակ Համակարգ մուտքագրված տվյալների մեջ առկա է 1-2 սխալ, որոնք կարող են կրճատ տարբերակով գրված լինելու կամ լեզվի հետ կապված սխալի արդյունք լինել՝ հաշվի առնելով տառասխալների այն համադրությունները և առանձնահատկությունները:

6.10.2 Եթե Ստացողի անձը հաստատող փաստաթղթում նշված է նաև անձի հայրանունը, սակայն դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության տվյալներում այն նշված չէ,

6.10.3 Եթե Ստացողի անձը հաստատող փաստաթղթում նշված չէ անձի հայրանունը, սակայն դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության տվյալներում այն նշված է,

6.10.4 Եթե դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության վերաբերյալ տեղեկատվությունը պարունակում է Ստացողի՝ հայատառ, լատինատառ կամ ռուսերեն լեզվով գրված անունը, ազգանունը, հայրանունը, սակայն անձը հաստատող փաստաթղթում այն այլ լեզվով է և հակառակը:

6.11 Եթե դրամական փոխանցումն ենթակա է տրամադրման Ստացողին կանխիկ եղանակով, ապա Ստացող կողմը մերժում է դրամական փոխանցման տրամադրումը Ստացողին հետևյալ դեպքերում.

- Ստացողի անձը հաստատող և այլ փաստաթղթերի չներկայացման դեպքում՝ Ստացող կողմի երկրի օրենսդրությանը համապատասխան,

- Ստացողի կողմից անհրաժեշտ այլ տեղեկատվության չներկայացման դեպքում՝ Ստացող կողմի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության համաձայն:

6.12 Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) և Դրամական փոխանցման ստացման (Pay-out) գործառնությունների ժամանակ Համակարգի կողմից ստուգվում է ՓԼ/ԱՖ հետ կապված Միջազգային և ներքին ցանկերի հետ համընկնման առկայությունը: ՓԼ/ԱՖ հետ կապված միջազգային և ներքին ցանկերի հետ համընկնման պարագայում՝ Համակարգի կողմից ավտոմատ բլոկավորվում է դրամական փոխանցման ուղարկումը (Send-money) և/կամ Դրամական փոխանցման ստացումը (Pay-out)՝ մինչև Համակարգի օպերատորի կողմից վերջինիս վերաբերյալ վերջնական որոշման կայացումը: Բլոկավորված դրամական փոխանցման գործառնությունների ուսումնասիրության ժամանակ կասկածելի գործարքների հայտնաբերման դեպքում Համակարգի օպերատորը կարող է սառեցնել կամ մերժել գործառնության կատարումը:

6.13 ՓԼ/ԱՖ հետ կապված Միջազգային և ներքին ցանկերի հետ համընկնման դեպքում ստացող կողմը կարող է սառեցնել դրամական միջոցները: Սույն կետի իմաստով դրամական միջոցների սառեցում է համարվում ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող դրամական միջոցների փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքը, այդ թվում՝ այդ դրամական միջոցների ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելքը, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելքը:

6.14 Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնությունը նախաձեռնելուց հետո 180 օրվա ընթացքում Ստացողի կողմից դրամական փոխանցման չստացման դեպքում՝ Ուղարկողի հեռախոսի համարին ուղարկվում է կարճ հաղորդագրություն դրա վերաբերյալ 180 օրը լրանալուց հետո Ստացողը չի կարող ստանալ դրամական փոխանցումը:

6.15 Ստացողի կողմից դրամական փոխանցման գումարը սույն կանոնների 6.14 կետով սահմանված ժամկետում չստանալու դեպքում Ուղարկողի կողմից Դրամական փոխանցման գումարը կարող է հետ ստացվել Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money) նախաձեռնելուց հետո երեք տարվա ընթացքում, հակառակ դեպքում՝ Ուղարկողի կողմից չպահանջված դրամական միջոցները ճանաչվում են Համակարգի օպերատորի սեփականությունը՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Սույն կետի դրույթները գործում են, եթե այլ բան սահմանված չէ մասնակցության պայմանագրով:

6.16 Ստացողի կողմից դրամական փոխանցման գումարը սույն Կանոնների 6.14 կետով սահմանված ժամկետում չստանալու դեպքում Ուղարկողը կարող է նախաձեռնել Դրամական փոխանցման վերադարձ (Reversal)՝ համապատասխան դիմումը ներկայացնելով Համակարգի այն Մասնակցին, որտեղից նախաձեռնվել էր Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money):

6.17 Ուղարկողի՝ դրամական փոխանցման վերադարձի (Reversal) դիմումը ընդունող և դրամական փոխանցման գումարը վերջինիս տրամադրող Մասնակիցը պարտավոր է նույնականացնել Ուղարկողին՝ վերջինիս անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ իր երկրի օրենսդրության համաձայն և իրականացնել այլ ստուգումներ՝ համոզվելու համար, որ դրամական փոխանցման

ուղարկումը նախաձեռնած և փոխանցման վերադարձի (Reversal) դիմումը ներկայացնող անձը միևնույն անձն է:

- 6.18** Ուղարկողը կարող է իրականացնել դրամական փոխանցման փոփոխում (Amendment)՝ համապատասխան դիմումը ներկայացնելով այն Մասնակցին, որի միջոցով նախաձեռնվել էր փոփոխման ենթակա Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money)՝ միաժամանակ նշելով դրամական փոխանցման փոփոխման (Amendment) պատճառը: Սույն կետի դրույթները գործում են, եթե այլ բան սահմանված չէ մասնակցության պայմանագրով:
- 6.19** Ուղարկողի՝ Դրամական փոխանցման փոփոխման (Amendment) դիմումն ընդունող Մասնակիցը պարտավոր է նույնականացնել Ուղարկողին վերջինիս անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ իր երկրի օրենսդրության համաձայն:
- 6.20** Դրամական փոխանցման փոփոխում (Amendment) իրականացնելու դեպքում թույլատրվում է փոփոխել միայն Ստացողի անվան, ազգանունի կամ հայրանունի/երկրորդ անվան տվյալները:
- 6.21** Դրամական փոխանցման փոփոխում (Amendment) թույլատրվում է նախաձեռնել մինչև Ստացողի կողմից Դրամական փոխանցման ստացումը (Pay-out):
- 6.22** Ուղարկող կողմը նախաձեռնում է դրամական փոխանցման չեղարկում (Cancellation)՝ Ուղարկողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ:
- 6.23** Ուղարկողը կարող է իրականացնել դրամական փոխանցման չեղարկում (Cancellation)՝ համապատասխան դիմումը ներկայացնելով այն Մասնակցին, որի միջոցով նախաձեռնվել էր չեղարկման ենթակա դրամական փոխանցման ուղարկումը (Send-money)՝ միաժամանակ նշելով չեղարկման պատճառը:
- 6.24** Դրամական փոխանցման չեղարկումը (Cancellation) կարող է նախաձեռնվել, եթե Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության նախաձեռնման պահից չի անցել 180 օր:
- 6.25** Ուղարկող կողմի նախաձեռնությամբ դրամական փոխանցման չեղարկումը (Cancellation) կարող է նախաձեռնվել այն դեպքում, երբ դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնությունը գրանցվել է Համակարգում՝ Ուղարկող կողմի աշխատակցի սխալի, ծրագրային կամ տեխնիկական խափանման արդյունքում:
- 6.26** Դրամական փոխանցման չեղարկում (Cancellation) կարող է իրականացվել Համակարգի օպերատորի կողմից հետևյալ դեպքերում՝
- 6.26.1** Եթե Ստացողին կանխիկ եղանակով տրամադրման ենթակա փոխանցման դեպքում դադարեցվել կամ կասեցվել է Ստացող կողմ հանդիսացող Մասնակցի մասնակցությունը Համակարգին,
- 6.26.2** Ուղարկողի և Ստացողի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքների ի հայտ գալու դեպքում, որոնք անհնարին են դարձնում դրամական փոխանցման տրամադրումը Ստացողին:
- 6.27** Համակարգի օպերատորի կողմից Դրամական փոխանցման չեղարկում (Cancellation) իրականացվելու դեպքում Համակարգի օպերատորը տեղեկացնում է այդ մասին Ուղարկողին, ինչպես նաև վերջինիս սպասարկող Մասնակցին, ում միջոցով նախաձեռնվել էր Դրամական

փոխանցման ուղարկման (Send-money) գործառնությունը, որը և ապահովում է Ուղարկողի կողմից տրամադրված Դրամական փոխանցման գումարի և Հաճախորդի միջնորդավճարի՝ Ուղարկողին հետվերադարձի իրականացումը:

6.28 Համակարգում անվերադարձելիության պահ է համարվում Ստացողին կանխիկով տրամադրումը կատարելու դեպքում՝ դրամական փոխանցման տրամադրման պահը, իսկ տրամադրումը Ստացողին անկանխիկ եղանակով կատարելու դեպքում՝ Ստացող Մասնակցի վճարում կատարելու հաստատման/ակցեպտավորելու պահը:

6.29 Ուղարկողի՝ Դրամական փոխանցման չեղարկման (Cancellation), փոփոխման (Amendment), հետ վերադարձի (Reversal) դիմումը ընդունող Մասնակիցը պարտավոր է նույնականացնել Ուղարկողին՝ վերջինիս անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ իր երկրի օրենսդրության համաձայն, ինչպես նաև իրականացնել այլ ստուգումներ համոզվելու համար, որ վերը նշված դիմում ներկայացնող անձը և Դրամական փոխանցման դիմում ներկայացնողը միևնույն անձիք են:

6.30 Մասնակիցները պարտավոր են Դրամական փոխանցման յուրաքանչյուր գործառնության համար Հաճախորդին տրամադրել անդորրագիր:

ԳԼՈՒԽ 7. ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Հաճախորդի միջնորդավճարի չափը սահմանվում է Համակարգի օպերատորի կողմից և հրապարկվում է Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ www.ubpay.am:

7.2 Հաճախորդի միջնորդավճարի չափը կարող է միակողմանիորեն փոփոխվել Համակարգի օպերատորի կողմից՝ այդ մասին ծանուցելով Մասնակիցներին՝ Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև կնքված Մասնակցության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

7.3 Հաճախորդի միջնորդավճարը գանձվում է միայն Ուղարկողից՝ դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության համար:

7.4 Գանձված միջնորդավճարը կարող է վերադարձվել Հաճախորդին՝ սույն Կանոնների 7.12 կետով նախատեսված դեպքերում:

7.5 Դրամական փոխանցման ստացման (Pay-out), դրամական փոխանցման վերադարձի (Reversal), դրամական փոխանցման փոփոխման (Amendment), դրամական փոխանցման չեղարկման (Cancellation) համար Ուղարկողից Հաճախորդի միջնորդավճար չի գանձվում:

7.6 Հաճախորդի միջնորդավճարը հաշվարկվում է որպես Դրամական փոխանցման գումարի միջակայքի համար սահմանված ֆիքսված գումար և/կամ տոկոս:

7.7 Հաճախորդի միջնորդավճարը հաշվարկվում է՝ կախված.

7.7.1 Ստացողին դրամական փոխանցման տրամադրման տարբերակից՝ տրամադրում կանխիկի միջոցով կամ անկանխիկ եղանակով,

7.7.2 Դրամական փոխանցման արժույթից,

7.7.3 Դրամական փոխանցման գումարից,

7.7.4 Ուղարկողի և Ստացողի երկրներից:

7.8 Համակարգի օպերատորը կարող է սահմանել Հաճախորդի միջնորդավճարի նվազագույն և առավելագույն գումար:

7.9 Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) համար Ուղարկողից գանձվող հաճախորդի միջնորդավճարը կարող է բաշխվել Ուղարկող կողմի, Համակարգի օպերատորի և Ստացող կողմի միջև համապատասխանաբար որպես Ուղարկող կողմի միջնորդավճար, Համակարգի օպերատորի միջնորդավճար և Ստացող կողմի միջնորդավճար:

7.10 Համակարգի օպերատորի, Ուղարկող և Ստացող Մասնակցի միջնորդավճարների չափը և բաշխման կարգը սահմանվում է Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև կնքված մասնակցության պայմանագրով:

7.11 Դրամական փոխանցման դեպքում Հաճախորդի միջնորդավճարը կարող է բաշխվել Ուղարկող կողմի, Համակարգի օպերատորի և Ստացող կողմի միջև՝ որպես միջնորդավճարի միջակայքի համար սահմանված ֆիքսված գումար և/կամ տոկոս:

7.12 Դրամական փոխանցման չեղարկման դեպքում՝ Ուղարկողի կողմից վճարված Հաճախորդի միջնորդավճարը վերադարձվում է Հաճախորդին, եթե չեղարկումը նախաձեռնվում է Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) պահից 24 ժամվա ընթացքում, հակառակ դեպքում՝ Միջնորդավճարը չի վերադարձվում Հաճախորդին:

7.13 Դրամական փոխանցման վերադարձի (Reversal) դեպքում Ուղարկողից գանձված Հաճախորդի միջնորդավճարը հետ չի վերադարձվում Ուղարկողին:

7.14 Անկանխիկ եղանակով տրամադրման միջոցով փոխանցման դեպքում՝ վճարված Հաճախորդի միջնորդավճարը հետ չի վերադարձվում Ուղարկողին, եթե Ստացող կողմը չի կարողացել կրեդիտագրել Ստացողի հաշիվը՝ Ուղարկողի կողմից սխալ ներկայացված տեղեկատվության պատճառով:

7.15 Համակարգում Հաճախորդի միջնորդավճարը հաշվարկվում է դրամական փոխանցման արժույթով:

7.16 Այն դեպքում, երբ դրամական փոխանցումը նախաձեռնվում է ՀՀ տարածքում՝ ՀՀ դրամով կամ այլ արժույթով, և ենթակա է տրամադրման Ստացողին այլ երկրում, ապա Ուղարկող կողմը ՀՀ օրենսդրության համաձայն Ուղարկողից գանձում է Հաճախորդի միջնորդավճար ՀՀ դրամով՝ հաշվարկված Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) նախաձեռնման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակված միջին փոխարժեքով կամ առևտրային բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այս դեպքում Ուղարկող կողմի՝ Համակարգի օպերատորին և Ստացող կողմին հասանելիք միջնորդավճարների գծով պարտավորությունը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) նախաձեռնման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Ստացողի կողմից Դրամական փոխանցման ստացումից (Pay-out) հետո, Ստացող կողմի

Միջնորդավճարի գծով Ստացող կողմի պահանջի չափը հաշվարկվում է այն արժույթով, որով նախաձեռնվել է Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money):

7.17 Այն դեպքում, երբ դրամական փոխանցումը նախաձեռնվում է ՀՀ տարածքից դուրս, ապա Ուղարկող կողմը Ուղարկողից գանձում է Հաճախորդի միջնորդավճար՝ Դրամական փոխանցման գումարի արժույթով, եթե փոխանցման նախաձեռնման երկրի օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: Անկախ այն հանգամանքից, թե ինչ արժույթով է Ուղարկող կողմը գանձել Հաճախորդի միջնորդավճարը Ուղարկողից, Ուղարկող կողմի՝ Համակարգի օպերատորին և Ստացող կողմին հասանելիք միջնորդավճարների գծով պարտավորությունը հաշվարկվում է Դրամական փոխանցման գումարի արժույթով: Ստացողի կողմից Դրամական փոխանցման ստացումից (Pay-out) հետո, Ստացող կողմի Միջնորդավճարի գծով Ստացող կողմի պահանջի չափը հաշվարկվում է այն արժույթով, որով նախաձեռնվել է Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money):

7.18 ՀՀ տարածքում նախաձեռնված և ՀՀ տարածքում տրամադրված դրամական փոխանցման դեպքում՝ Ուղարկող կողմը ՀՀ օրենսդրության համաձայն Ուղարկողից գանձում է Հաճախորդի միջնորդավճար ՀՀ դրամով՝ հաշվարկված Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) նախաձեռնման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակված միջին փոխարժեքով: Այս դեպքում Ուղարկող կողմի՝ Համակարգի օպերատորին և Ստացող կողմին հասանելիք Միջնորդավճարների պարտավորությունը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ հաշվարկված Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) նախաձեռնման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Ստացողի կողմից Դրամական փոխանցման ստացումից (Pay-out) հետո, Ստացող կողմի Միջնորդավճարի գծով Ստացող կողմի պահանջի չափը հաշվարկվում է ՀՀ դրամով Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) նախաձեռնման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքով՝ անկախ դրամական փոխանցման արժույթից:

7.19 Միջնորդավճարների գումարների բաշխումը Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև իրականացվում է համաձայն դրանց միջև կնքված մասնակցության պայմանագրի դրույթների, ընդ որում, Համակարգի Հայաստանյան մասնակիցների համար կիրառվում է միասնական մոտեցում:

7.20 Համակարգում ՀՀ դրամի դեպքում գումարը կլորացվում է ստորակետից հետո մեկ նիշի, իսկ արտարժույթի դեպքում՝ ստորակետից հետո երկու նիշի ճշգրտությամբ:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

8.1 Համակարգի գործունեության ժամանակացույցի համար հիմք է ընդունվում Երևանի ժամանակը:

8.2 Հաշվարկային փուլ է համարվում՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ժամը 00:00-ից մինչև հաջորդ աշխատանքային օրվա 23:59 ընկած ժամանակահատվածը:

8.3 Եթե Աշխատանքային օրվան հաջորդում է ոչ Աշխատանքային օր (օրեր), ապա ոչ աշխատանքային օրերը ներառվում են տվյալ հաշվարկային փուլի մեջ, այն է՝ Հաշվարկային փուլ է համարվում վերջին

Աշխատանքային օրվա ժամը 00:00-ից մինչև դրան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 23:59:

8.4 Մեկ Հաշվարկային փուլի մեջ կարող են ընդգրկվել մեկից ավելի օրացուցային օրեր:

8.5 Հաշվարկային փուլի ընթացքում դրամական փոխանցման գործառնություններ, զուտ դեբետային սահմանաչափի սահմանման, քլիրինգի և վերջնահաշվարկի հետ կապված և այլ գործողություններն իրականացվում են հետևյալ ժամկետներում.

Գործողություն	Երևանի ժամանակով
Հաճախորդների դիմումների հիման վրա Մասնակիցների կողմից նախաձեռնված դրամական փոխանցման գործառնությունների ընդունում և մշակում	Մասնակիցների աշխատանքային օրերին և ժամերին
Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կողմից քլիրինգի իրականացում և նախորդ Հաշվարկային փուլի համար վերջնահաշվարկի և նոր Հաշվարկային փուլի համար սառեցման հանձնարարականի ձևավորում և ներկայացում Հաշվարկային բանկին	Հաշվարկային փուլի ավարտից հետո մինչև 11:30-ը
Հաշվարկային բանկի կողմից վերջնահաշվարկի կատարում և սառեցման հանձնարարականի հիման վրա միջոցների սառեցում	Վերջնահաշվարկի և սառեցման հանձնարարականի ստացումից հետո կես ժամվա ընթացքում, եթե այն ներկայացվել է 9:30-16:30 ժամանակահատվածում: Եթե հանձնարականը ներկայացվել է ժամը 16:30-ից հետո, այն կատարվում է հաջորդ աշխատանքային օրվա սկզբին:
Զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտի ներկայացում Մասնակիցների կողմից	Մասնակիցների աշխատանքային օրերին և ժամերին
Մասնակիցների կողմից զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտի հիման վրա՝ Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կողմից սառեցման հանձնարարականի ներկայացում Հաշվարկային բանկին	Հայտը ստանալուց հետո առավելագույնը 15 րոպեի ընթացքում

ԳԼՈՒԽ 9. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔԼԻՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

9.1 Համակարգում քլիրինգը և վերջնահաշվարկն իրականացվում են առանձին-առանձին՝ ըստ սույն Կանոններով սահմանված փոխանցման յուրաքանչյուր արժույթի (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի):

9.2 Համակարգում քիրինգն ու վերջնահաշվարկն իրականացվում են բազմակողմանի զուտացման սկզբունքով:

9.3 Հաշվարկային փուլի ընթացքում իրականացված ստորև նշված Դրամական փոխանցման յուրաքանչյուր գործառնության ժամանակ Մասնակիցների մոտ առաջանում է վճարելու պարտավորություն (այսուհետ՝ պարտավորություն) կամ գումար ստանալու պահանջ (այսուհետ՝ պահանջ) Համակարգի օպերատորի նկատմամբ և հակառակը, մասնավորապես.

9.3.1 Մասնակցի կողմից իրականացված Դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության ժամանակ Ուղարկող կողմի մոտ առաջանում է պարտավորություն Համակարգի օպերատորի նկատմամբ, իսկ Համակարգի օպերատորի մոտ՝ պահանջ Ուղարկող կողմի նկատմամբ՝ Դրամական փոխանցման գումարի ու Համակարգի օպերատորի և Ստացող կողմի հասանելիք միջնորդավճարների հանրագումարի չափով: Մասնակցի կողմից իրականացված Դրամական փոխանցման ստացման (Pay-out) գործառնության ժամանակ Ստացող կողմի մոտ առաջանում է պահանջ Համակարգի օպերատորի նկատմամբ, իսկ Համակարգի օպերատորի մոտ՝ պարտավորություն Ստացող կողմի նկատմամբ՝ Դրամական փոխանցման գումարի և Ստացող Կողմին Միջնորդավճարից կամ այլ ձևով հաշվարկված եկամտից հասանելիք մասնաբաժնի չափով:

9.3.2 Մասնակցի կողմից իրականացված Դրամական փոխանցման վերադարձ (Reversal) և Դրամական փոխանցման չեղարկում (Cancellation) գործառնությունների ժամանակ գումարը Ուղարկողին վերադարձնող Մասնակցի մոտ առաջանում է պահանջ Համակարգի օպերատորի նկատմամբ, իսկ Համակարգի օպերատորի մոտ՝ պարտավորություն այդ Մասնակցի նկատմամբ՝ Դրամական փոխանցման գումարի չափով, իսկ Միջնորդավճարը Հաճախորդին վերադարձնելու դեպքում՝ նաև Համակարգի օպերատորին և Ստացող կողմին Միջնորդավճարից կամ այլ ձևով հաշվարկված եկամտից հասանելիք մասնաբաժինների հանրագումարի չափով:

9.4 Պրոցեսինգային/քիրինգային կենտրոնը Հաշվարկային փուլի ավարտին իրականացնում է Համակարգի օպերատորի և յուրաքանչյուր Մասնակցի՝ սույն Կանոնների 9.3 կետում նշված փոխադարձ պահանջների և պարտավորությունների հաշվանց/զուտացում, որի արդյունքում՝ յուրաքանչյուր Մասնակցի համար Համակարգի օպերատորի նկատմամբ ձևավորվում է զուտ դեբետային կամ կրեդիտային դիրք՝ ըստ սույն Կանոններով սահմանված փոխանցման յուրաքանչյուր արժույթի:

9.5 Եթե Հաշվարկային փուլի ընթացքում Մասնակցի՝ պահանջներ ձևավորող Դրամական փոխանցման գործառնությունների հանրագումարը գերազանցում է պարտավորություն ձևավորող գործառնությունների հանրագումարը, ապա տարբերության չափով Համակարգի օպերատորի մոտ Մասնակցի նկատմամբ առաջանում է զուտ դեբետային դիրք (զուտ դեբետային պարտավորություն):

9.6 Եթե Հաշվարկային փուլի ընթացքում Մասնակցի՝ պարտավորություն ձևավորող Դրամական փոխանցման գործառնությունների հանրագումարը գերազանցում է պահանջներ ձևավորվող գործառնությունների հանրագումարը, ապա տարբերության չափով Մասնակցի մոտ առաջանում է

զուտ դեբետային դիրք (զուտ դեբետային պարտավորություն) Համակարգի օպերատորի նկատմամբ:

- 9.7** Յուրաքանչյուր Մասնակից Համակարգի ծրագրային ապահովման միջոցով հնարավորություն ունի դիտարկել իր զուտ դիրքի վերաբերյալ տեղեկատվությունը:
- 9.8** Համակարգում ընդհանուր վերջնահաշվարկի ապահովման նպատակով բոլոր մասնակիցները պետք է Հաշվարկային բանկում ունենան վճարային հաշիվներ՝ ըստ փոխանցումների իրականացման յուրաքանչյուր արժույթի (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի):
- 9.9** Համակարգում ընդհանուր վերջնահաշվարկն իրականացվում է Հաշվարկային բանկի կողմից՝ օգտագործելով Հաշվարկային բանկում Մասնակիցների վճարային հաշիվների վրա նախապես սառեցված (դեպոնացված) դրամական միջոցները:
- 9.10** Ընդհանուր վերջնահաշվարկն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր յուրաքանչյուր Հաշվարկային փուլի համար՝ նախորդ Հաշվարկային փուլում կատարված գործառնությունների գծով և սույն Կանոններով սահմանված ժամանակացույցի համաձայն:
- 9.11** Հաշվարկային բանկն ապահովում է վերջնահաշվարկի իրականացումը և մասնակիցների վճարային հաշիվներից միջոցների ելքագրման կամ մուտքագրման, ինչպես նաև հաջորդող հաշվարկային փուլի համար միջոցների սառեցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Մասնակիցներին:
- 9.12** Համակարգում վերջնահաշվարկի ապահովման երաշխիքների տրամադրման և ռիսկերի գսպման նպատակով կիրառվում են սույն Կանոններով սահմանված սահմանաչափերը:
- 9.13** Համակարգի բոլոր Մասնակիցները սահմանում են իրենց զուտ դեբետային սահմանաչափերը՝ ըստ սույն Կանոններով սահմանված փոխանցումների իրականացման յուրաքանչյուր արժույթի (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի):
- 9.14** Հաշվարկային բանկում Մասնակցի համապատասխան արժույթով վճարային հաշվի վրա պետք է սառեցվեն (դեպոնացվեն) մասնակցի կողմից մուտքագրված զուտ դեբետային սահմանաչափի մեծությամբ դրամական միջոցներ:
- 9.15** Ցանկացած Մասնակից իրական ժամանակում ունի հասանելիություն Համակարգի ծրագրային ապահովմանը՝ կառավարելու կամ փոփոխելու իր սեփական զուտ դեբետային սահմանաչափը:
- 9.16** Մասնակցի զուտ դեբետային սահմանաչափը շուրջօրյա՝ Հաշվարկային փուլի ընթացքում կարող է փոփոխվել Մասնակցի կողմից՝ սույն Կանոնների համաձայն: Ընդ որում՝ եթե զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտը դեռևս չի հաստատվել Համակարգի կողմից, ապա հետագայում ուղարկված զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման նոր հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:
- 9.17** Եթե Հաշվարկային փուլի ընթացքում Մասնակիցը ներկայացնում է զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտ, որը փոքր է տվյալ պահին Մասնակցի զուտ դեբետային պարտավորության չափից, ապա Մասնակցի կողմից ներկայացված զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտը մերժվում է:

- 9.18** Մասնակցի կողմից ներկայացված զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտի հիման վրա Հաշվարկային բանկը սառեցնում է Մասնակցի վճարային հաշվին առկա միջոցները սառեցման հանձնարարականում նշված գումարի չափով, եթե այդ հաշվին առկա միջոցները հավասար են կամ գերազանցում են ներկայացված զուտ դեբետային սահմանաչափի գումարը: Հաշվարկային բանկը մասնակիորեն է բավարարում զուտ դեբետային սահմանաչափին համարժեք միջոցների սառեցման հանձնարարականը, եթե Մասնակցի վճարային հաշվին առկա միջոցները բավարար չեն զուտ դեբետային սահմանաչափի չափով միջոցների սառեցման (դեպոնացման) համար:
- 9.19** Հաշվարկային բանկը Մասնակիցներին տեղեկացնում է միջոցների փաստացի սառեցման վերաբերյալ: Հաշվարկային բանկից ստացված միջոցների փաստացի սառեցման տեղեկատվության հիման վրա Համակարգը փոփոխում է զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտ ներկայացրած Մասնակցի զուտ դեբետային սահմանաչափի գումարը:
- 9.20** Նոր Հաշվարկային փուլի սկզբին, այն դեպքում, երբ Մասնակցի կողմից զուտ դեբետային սահմանաչափի փոփոխման հայտ չի ներկայացվել, ապա Մասնակցի նոր Հաշվարկային փուլի զուտ դեբետային սահմանաչափ է սահմանվում քլիրինգին մասնակցած Մասնակցի զուտ դեբետային մնացորդը, եթե վերջինս փոքր է Մասնակցի համար Համակարգում գրանցված (հաստատված) զուտ դեբետային սահմանաչափից, հակառակ դեպքում՝ եթե զուտ դեբետային մնացորդը մեծ կամ հավասար է զուտ դեբետային սահմանաչափից, ապա վերցվում է նախորդ Հաշվարկային փուլի զուտ դեբետային սահմանաչափը, իսկ զուտ դեբետային մնացորդը ընդունվում է որպես զուտ դեբետային սահմանաչափին հավասար: Հաշվարկային բանկին ուղղված վերջնահաշվարկի կատարման և սառեցման հանձնարարականում որպես Մասնակցի համար սառեցման ենթակա գումար նշվում է մասնակցի նոր Հաշվարկային փուլի զուտ դեբետային սահմանաչափը:
- 9.21** Հաշվարկային բանկը մերժում է Մասնակցի զուտ դեբետային սահմանաչափին համարժեք միջոցների սառեցման հանձնարարականը, եթե Մասնակցի հաշվին առկա միջոցները բացակայում են:
- 9.22** Համակարգում ապահովվում է զուտ դեբետային սահմանաչափի օգտագործման գործակցի մեկ կամ երկու շեմ, որը սահմանում է յուրաքանչյուր Մասնակից, և որը Մասնակցի կողմից գերազանցելու դեպքում Մասնակցին Համակարգը ուղարկում է տեղեկացում և/կամ զգուշացում: Զուտ դեբետային սահմանաչափի օգտագործման գործակիցը հաշվարկվում է որպես Մասնակցի զուտ դեբետային պարտավորության և զուտ դեբետային սահմանաչափի հարաբերակցություն:
- 9.23** Համակարգի օպերատորը Մասնակիցներին ուղարկում է հաշվետվություններ կատարված գործողությունների վերաբերյալ՝ դրանք ուղարկելով Մասնակցին համաձայնեցված կապի միջոցով:
- 9.24** Համակարգի օպերատորը Մասնակիցներին ուղարկում է Համակարգում իրականացված գործարքների քաղվածքները՝ համապատասխան արժույթով արտահայտված, որոնք արտացոլում են Մասնակիցների հաշիվներին միջոցների մուտքագրումը և ելքագրումը:

- 9.25** Մասնակիցները, Համակարգի օպերատորի հետ բանկային հաշվի պայմանագրեր կնքելիս, իրավունք են տալիս դուրս գրել հաշիվներից միջոցներ առանց Մասնակիցների լրացուցիչ ցուցումների:
- 9.26** Համակարգի օպերատորն իրավունք ունի վճարման պահանջներ ներկայացնել Մասնակիցներին՝ լրացուցիչ տրամադրվող վճարային ենթակառուցվածքային ծառայությունների համար, ինչպես նաև Համակարգի մասնակիցներին տրամադրել վարկեր՝ Համակարգում վճարումներ կատարելու համար:
- 9.27** Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև հաշվարկների հաճախականությունն ու պայմանները սահմանվում են դրանց միջև կնքված մասնակցության պայմանագրով:
- 9.28** Մասնակիցների հետ հաշվարկների վերահսկումն իրականացվում է ծրագրային ապահովման միջոցով, որը թույլ է տալիս ստանալ.
- «Քլիրինգի հաշվետվություն», որը պարունակում է UBPAY միջազգային վճարային համակարգի գումարային փոխանցումների վերաբերյալ ամփոփ տվյալներ,
 - «Արտահանման հսկողություն» հաշվետվություն, որը պարունակում է մանրամասն տվյալներ փոխանցումների, հաշվապահական մուտքերի վերաբերյալ, որոնք չեն ներբեռնվել գործառնական օր կամ բեռնված են եղել սխալներով:
- 9.29** Դրամական միջոցներ ստացած Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկվում է ծանուցում միջոցների մուտքագրման մասին՝ նշելով կատարված հանձնարարականի մանրամասները և կատարման ամսաթիվը:
- 9.30** Համակարգի մասնակցին տրամադրվում է դրամական միջոցների հոսքերի մասին ծանուցում՝ հաշվի քաղվածքի տեսքով:
- 9.31** Աշխատանքային օրվա ընթացքում դրամական միջոցների հոսքերի դեպքում քաղվածքը ներկայացվում է ոչ ուշ, քան գործարքների օրվան հաջորդող աշխատանքային օրը:
- 9.32** Եթե աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի մասնակցի հաշվով գործարքներ չեն իրականացվել, ապա նշված օրվա մասին ծանուցում չի ուղարկվում:
- 9.33** Մասնակիցները ցանկացած պահի կարող են Համակարգի միջոցով հարցում ուղարկել և ստանալ և (կամ) դիտարկել հետևյալ տեղեկատվությունը իրենց վերաբերյալ.
- 9.33.1** Համակարգում զուտ դեբետային սահմանաչափի չափը՝ ըստ սույն Կանոններով սահմանված փոխանցումների իրականացման յուրաքանչյուր արժույթի,
- 9.33.2** տվյալ պահին զուտ դեբետային մնացորդը՝ ըստ սույն Կանոններով սահմանված փոխանցումների իրականացման յուրաքանչյուր արժույթի,
- 9.33.3** տվյալ պահին զուտ դեբետային սահմանաչափի օգտագործման գործակցի չափը,
- 9.33.4** ամենամեծ դրամական փոխանցման գործառնության չափը, որի գծով վերջնահաշվարկը դեռևս չի իրականացվել և դրա իրականացման ժամը:

ԳԼՈՒԽ 10. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Համակարգի օպերատորը պարտավոր է՝

- 10.1** Բացել և վարել Մասնակիցների վճարային հաշիվները՝ սույն Կանոններով սահմանված փոխանցումների իրականացման յուրաքանչյուր արժույթով:
- 10.2** Մշակել և հաստատել Համակարգի գործունեության կանոնակարգը, այդ թվում նաև՝ սույն Կանոնները, փոփոխություններ և լրացումներ իրականացնել դրանցում, ապահովել կանոններով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը, այդ թվում նաև՝ Մասնակցի կողմից ռիսկերի գնահատման և կառավարման մասով:
- 10.3** Ապահովել սույն Կանոնների հրապարակումը Համակարգի պաշտոնական կայքում հետևյալ հասցեով՝ www.ubpay.am:
- 10.4** Սույն Կանոններում փոփոխությունների իրականացման դեպքում ապահովել Մասնակիցների կողմից՝ Կանոններում նախատեսվող փոփոխություններին ծանոթացման և կարծիքի ներկայացման հնարավորությունը՝ սույն Կանոններով սահմանված կարգով:
- 10.5** Մշակել Համակարգի զարգացման ռազմավարությունը, ռաումնասիրել նոր գործիքների, նոր ծառայությունների կիրառման հնարավորությունները և ապահովել դրանց ներդրումը:
- 10.6** Վարել և Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում (www.ubpay.am) հրապարակել Մասնակիցների սպասարկման կետերի ցանկը:
- 10.7** Կազմակերպել և ապահովել Համակարգում ռիսկերի կառավարումը, իրականացնել համակարգում առկա ռիսկերի մոնիտորինգ և գնահատում, ապահովել Համակարգի անխափան գործունեությունը:
- 10.8** Մշակել Համակարգի տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը և ապահովել դրա կիրառումը Համակարգում:
- 10.9** Օպերատիվ ձևով տեղեկացնել Մասնակիցներին Համակարգի միջոցով դրամական փոխանցման գործառնությունների իրականացման ժամանակավոր կասեցման և/կամ խափանումների վերաբերյալ՝ այդպիսի հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ տեղեկատվությունը հրապարակելով Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում (www.ubpay.am) և/կամ ուղարկելով Համակարգի սուբյեկտներին՝ Համակարգի օպերատորի հետ կնքած պայմանագրում նշված՝ համաձայնեցված կապի միջոցով:
- 10.10** Մշակել Համակարգում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունը և ներդնել արդյունավետ մեխանիզմներ Համակարգի միջոցով ՓԼ/ԱՖ նպատակով իրականացվող դրամական փոխանցման գործառնությունների բացառման համար, այդ թվում նաև՝ ապահովել ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկի մուտքագրումը Համակարգի ծրագրային ապահովման մեջ:
- 10.11** Մշակել ռիսկերի կառավարման ներքին փաստաթղթեր՝ ուղղված ռիսկերի կառավարման մոդելի բնութագրմանը, ռիսկերի կառավարման լրացուցիչ միջոցառումների ու մեթոդների սահմանմանը և այլ գործառնությունների իրականացմանը:

- 10.12** ՀՀ օրենսդրության համաձայն բացահայտել և ուսումնասիրել ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերը, անհրաժեշտության դեպքում ապահովել դրամական փոխանցման գործառնության սառեցումը կամ մերժումը:
- 10.13** Հաճախորդի՝ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված անձանց ցանկերի հետ համընկնման դեպքում ապահովել Հաճախորդի դրամական միջոցների սառեցումը:
- 10.14** Ուսումնասիրել Համակարգի միջոցով իրականացվող զեղծարարությունների և չարաշահումների դեպքերը, մշակել դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված քաղաքականություն, ներդնել համապատասխան մեխանիզմներ:
- 10.15** Սահմանել դրամական փոխանցումների դեպքում Ուղարկողից գանձվող Միջնորդավճարի չափը:
- 10.16** Ապահովել Մասնակիցների և Հաճախորդների դիմում-բողոքների, հարցադրումների ընդունումը՝ կապված Համակարգի գործունեության հետ և դրանց ընթացք տալ՝ սույն Կանոնների 17-րդ գլխով սահմանված կարգով և պայմաններով:
- 10.17** Մասնակիցներին տեղեկացնել Համակարգի տեխնիկաձրագրային ապահովման պայմանների փոփոխության վերաբերյալ առնվազն 3 (երեք) ամիս առաջ, եթե այդ փոփոխությունները կարող են առաջացնել տեխնիկաձրագրային փոփոխությունների անհրաժեշտություն Մասնակցի մոտ:
- 10.18** Առնվազն 1 (մեկ) աշխատանքային օր առաջ տեղեկացնել Մասնակիցներին Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կողմից պլանային ստուգումների կամ տեխնիկական միջամտությունների իրականացման արդյունքում Համակարգի գործունեության դադարեցման դեպքերի մասին:
- 10.19** Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կողմից նշված պլանային ստուգումների կամ տեխնիկական միջամտությունների իրականացման օրվա համար Մասնակիցներից առարկություններ ստանալու դեպքում՝ տեղեկությունը ստանալուց 1 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկել նոր օր՝ նման ծանուցում ստանալու պահից սկսած մեկ ամսվա ընթացքում Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կողմից այդ աշխատանքները իրականացնելու համար:
- 10.20** Մասնակցի գործունեության մասին ցանկացած գովազդային տեղեկատվություն (այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված) տեղադրելուց առաջ դրանք համաձայնեցնել Մասնակցի հետ:
- 10.21** Մասնակիցների ծառայությունների շրջանակի և սպասարկման կետերի փոփոխման դեպքում փոփոխությունների մասին տեղեկացնել մյուս մասնակիցներին՝ այդ փոփոխությունների կատարումից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:
- 10.22** Հաճախորդների դիմում-բողոքների պատասխանների նախագծերի վերաբերյալ կարծիք/դիրքորոշում հայտնել Մասնակցին՝ նախագիծը ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, եթե դա չի խախտում բանկային գաղտնիքի պահպանման պահանջները:
- 10.23** Ապահովել Հաճախորդների անձնական տվյալների մշակումը և պաշտպանությունը սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- 10.24** Ապահովել Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում այն տեղեկատվության հրապարակումը, թե Դրամական փոխանցման ուղարկումը (Send-money) նախաձեռնելուց հետո ինչ ժամկետներում Ստացողը կարող է ստանալ դրամական փոխանցումը:
- 10.25** Ապահովել Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում Մասնակիցների՝ մասնակցության կասեցման և դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:
- 10.26** Ապահովել գաղտնիք համարվող տեղեկությունների հավաքագրումը, մշակումը և դրանց գաղտնիության պահպանումը՝ սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 10.27** Կատարել սույն Կանոններով, ՀՀ օրենսդրությամբ, մասնակիցների հետ կնքած պայմանագրով սահմանված այլ պարտականություններ:
- 10.28** Արտասահմանյան Մասնակցի՝ Համակարգին մասնակցության դեպքում Համակարգի օպերատորը պարտավոր է նաև
- 10.28.1** Հավաքել բավարար տեղեկություններ Մասնակցի գործունեության բնույթը պարզելու համար և հիմք ընդունելով հրապարակային և այլ արժանահավատ տեղեկությունները, գնահատել Մասնակցի գործարար համբավն ու դրա նկատմամբ իրականացվող վերահսկողության որակը, ներառյալ այն, թե արդյոք այդ Մասնակիցը ներգրավված է եղել կամ տվյալ պահին ներգրավված է ՓԼ/ԱՖ հետ կապված քրեական հետապնդման կամ որևէ այլ վարույթի մեջ,
- 10.28.2** Գնահատել Մասնակցի կողմից իրականացվող՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ընթացակարգերը, հավաստիանալու համար, որ դրանք բավարար են և արդյունավետ,
- 10.28.3** Փաստաթղթավորել Մասնակցի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխան պարտականությունները, եթե դրանք հստակորեն հայտնի չեն,
- 10.28.4** Հավաստիանալ, որ Մասնակիցը չի հանդիսանում կեղծ ֆինանսական կազմակերպություն: Համակարգի օպերատորը պետք է չհաստատի կեղծ ֆինանսական կազմակերպությունների՝ Համակարգին մասնակցությունը:

Համակարգի օպերատորն իրավունք ունի՝

- 10.29** Միակողմանիորեն փոփոխություններ իրականացնել սույն Կանոններում՝ որոշումն ուժի մեջ մտնելուց առնվազն 1 (մեկ) ամիս առաջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկացնելով Համակարգի բոլոր մասնակիցներին:
- 10.30** Ներգրավել Համակարգի նոր Մասնակիցներ, նրանց հետ կնքել մասնակցության պայմանագրեր:
- 10.31** Մերժել Մասնակցի թեկնածուի Համակարգին մասնակցության դիմումը, եթե Մասնակցի թեկնածուն չի բավարարում սույն Կանոններով սահմանված մասնակցության չափանիշներին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
- 10.32** Ստուգել Մասնակցի կողմից Համակարգին մասնակցության և վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների՝ սույն Կանոններին և Համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերին համապատասխանության աստիճանը:

- 10.33** Կասեցնել, դադարեցնել Մասնակցի մասնակցությունը Համակարգին կամ վերջինիս նկատմամբ կիրառել սույն Կանոններով սահմանված պատասխանատվության այլ միջոց՝ սույն Կանոններով սահմանված դեպքերում և կարգով:
- 10.34** Միակողմանիորեն փոփոխել դրամական փոխանցումների դեպքում Հաճախորդներից գանձվող Միջնորդավճարի չափը և տեղեկացնել դրա մասին Մասնակիցներին՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ՝ տեղեկատվությունը հրապարակելով Համակարգի պաշտոնական կայքում (www.ubpay.am) և/կամ տեղեկացում ուղարկելով Մասնակիցներին՝ վերջիններիս հետ կնքած մասնակցության պայմանագրում սահմանված համաձայնեցված կապի միջոցով:
- 10.35** Հավաքել, մշակել և պահել Հաճախորդների անձնական տվյալները՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:
- 10.36** Կազմակերպել և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված Համակարգի միջոցով մատուցվող ծառայությունների առաջխաղացմանը և ընդլայնմանը, մշակել և ներդնել Հաճախորդների և Մասնակիցների խրախուսման ծրագրեր:
- 10.37** Գովազդային, տեղեկատվական նյութեր պատրաստելիս և տեղադրելիս Մասնակցի համաձայնությամբ օգտագործել Մասնակցի ապրանքային նշանը և անվանումը:
- 10.38** Անհրաժեշտության դեպքում պահանջել և ստանալ Մասնակցից Հաճախորդի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռիսկերը զսպելու նպատակով:
- 10.39** Սույն Կանոնների 5.2.37 կետում նշված տեղեկատվությունն անհրաժեշտության դեպքում տրամադրել ուղարկող կամ ստացող կողմերին, ըստ վերջիններիս կողմից ներկայացված էլեկտրոնային նամակի, ինչպես դրամական փոխանցման գործառնության իրականացման ընթացքում, այնպես էլ հետագայում՝ նրանց կողմից հաճախորդների ընթացիկ պատշաճ ուսումնասիրության, ինչպես նաև գործարքների դիտանցման նպատակով:
- 10.40** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով Մասնակիցների համար սահմանել կանոններ՝ պահպանելով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին ՀՀ օրենսդրությունը:
- 10.41** Կատարել հարցումներ և ստանալ տեղեկատվություն՝ Համակարգի Մասնակիցներից, վերջիններիս կողմից Համակարգի միջոցով իրականացված գործառնությունների, ինչպես նաև Մասնակիցների և վերջիններիս իրական շահառուների վերաբերյալ:
- 10.42** Սահմանել և փոփոխություններ իրականացնել Դրամական փոխանցման գործառնությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվության և վճարահաշվարկային փաստաթղթերի պահպանման նկատմամբ պահանջներում:
- 10.43** Սույն Կանոններով սահմանված սահմանափակումներից բացի միակողմանիորեն սահմանել և կիրառել Մասնակցի կողմից իրականացվող Դրամական փոխանցման գործառնությունների ծավալի և քանակի նկատմամբ այլ սահմանափակումներ՝ հիմնվելով ՀՀ կենտրոնական բանկի կամ միջազգային կառույցների կողմից նախատեսված սահմանափակումների վրա՝ առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնելով Մասնակցին՝ հնարավորության սահմաններում նշելով սահմանափակումների կիրառման ժամկետը:

10.44 Իրացնել սույն Կանոններով և/կամ Համակարգի օպերատորի և Համակարգի մասնակիցների միջև կնքված պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ:

ԳԼՈՒԽ 11. ՊՐՈԳՆՍԻՆԳԱՅԻՆ/ՔԼԻՐԻՆԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Պրոգնսինգային/քլիրինգային կենտրոնը պարտավոր է՝

- 11.1** Ապահովել Դրամական փոխանցման գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և պահպանումը:
- 11.2** Ապահովել պրոգնսինգային և քլիրինգային ծառայությունների անխափան մատուցումը:
- 11.3** Ընդունել և մշակել Մասնակիցների՝ դրամական փոխանցման գործառնությունների հետ կապված հաղորդագրությունները, ստուգել Մասնակիցների կողմից ներկայացված հաղորդագրությունների համապատասխանությունը սահմանված պահանջներին:
- 11.4** Հաշվարկել Մասնակիցների և Համակարգի օպերատորի զուտ դիրքերը՝ ըստ սույն կանոններով սահմանված կարգի:
- 11.5** Սույն Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով՝ յուրաքանչյուր Հաշվարկային փուլի համար Հաշվարկային բանկին ներկայացնել Մասնակիցների և Համակարգի օպերատորի զուտ դիրքերը և սույն Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում տալ վերջնահաշվարկի կատարման հանձնարարական Հաշվարկային բանկին:
- 11.6** Համակարգի օպերատորի և Մասնակիցների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա վարել վերջիններիս Զուտ դեբետային սահմանաչափը, և Հաշվարկային բանկին ներկայացնել սահմանված զուտ դեբետային սահմանաչափին համարժեք գումարների սառեցման հանձնարարական՝ սույն Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով:
- 11.7** Սույն Կանոնների համաձայն ստուգել Մասնակիցների զուտ դեբետային մնացորդը դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության կատարումից առաջ, դրա բավարար լինելու դեպքում՝ հաստատել Մասնակցի կողմից նախաձեռնված գործառնության կատարումը, իսկ անբավարար լինելու դեպքում՝ մերժել:
- 11.8** Ձևավորել և դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության նախաձեռնման պահին տրամադրել դրամական փոխանցման եզակի հղման համարը:
- 11.9** Ապահովել նոր Մասնակիցների և նրանց սպասարկման կետերի վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը Համակարգի տեղեկատվական և ծրագրային համակարգ, Համակարգից հեռացնել Մասնակիցների և նրանց սպասարկման կետերի վերաբերյալ տեղեկատվությունը:
- 11.10** Ապահովել Մասնակիցների համար բաց բանալու հավաստագրերի ստեղծումը և տրամադրումը:

- 11.11** Ապահովել Համակարգի ադմինիստրավորումը, մշակել Համակարգի ծրագրային ապահովումից օգտվելու ձեռնարկներ և փաստաթղթեր:
- 11.12** Համակարգի Կանոններով, Համակարգի օպերատորի կողմից մշակված տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն ապահովել Համակարգում շրջանառվող տեղեկատվության անվտանգությունը, այդ թվում նաև՝ իրականացնելով Համակարգի ներքին և արտաքին տեղեկատվական ցանցի պաշտպանվածությանն ուղղված միջոցառումներ:
- 11.13** Ապահովել Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնում տեղադրված Համակարգի աշխատանքը ապահովող սարքավորումների, սերվերների, աշխատակալանների անվտանգությունը:
- 11.14** Պահպանել Համակարգի միջոցով իրականացված դրամական փոխանցման գործառնությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը և վճարահաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներն առնվազն 5 (հինգ) տարի:
- 11.15** Ապահովել Հաճախորդների անձնական տվյալների մշակումը և պաշտպանությունը սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 11.16** Ապահովել Գաղտնիք համարվող տեղեկությունների հավաքագրումը, մշակումը, պահպանումը և դրանց չիրապարակումը՝ սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 11.17** Կատարել սույն Կանոններով, ՀՀ օրենսդրությամբ, Համակարգի մասնակիցների հետ կնքած պայմանագրով սահմանված այլ պարտականություններ:

Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնն իրավունք ունի՝

- 11.18** Սահմանել և փոփոխություններ իրականացնել ծրագրային ապահովման գործարկման տեխնիկական պայմաններում:
- 11.19** Իր պարտականությունների իրականացման համար ընտրել տեխնիկածրագրային միջոցներ:
- 11.20** Իրացնել սույն Կանոններով կամ Համակարգի Մասնակիցների միջև կնքված պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ:

ԳԼՈՒԽ 12. ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվարկային բանկը պարտավոր է՝

- 12.1** Ապահովել Համակարգի միջոցով իրականացված դրամական փոխանցման գործառնությունների գծով վերջնահաշվարկի իրականացումն յուրաքանչյուր Հաշվարկային փուլի համար՝ Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնից ստացված վերջնահաշվարկի կատարման հանձնարարականի հիման վրա՝ Համակարգի աշխատանքի ժամանակացույցի համաձայն:
- 12.2** Սառեցնել Մասնակիցների վճարային հաշիվներին առկա միջոցները՝ Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնից ստացված սառեցման հանձնարարականի հիման վրա՝ սույն Կանոններով սահմանված կարգով:

12.3 Մասնակիցների վճարային հաշիվներին առկա միջոցների սառեցումից հետո Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնին և Մասնակիցներին ներկայացնել սառեցման վերաբերյալ տեղեկատվություն:

12.4 Իրականացնել Մասնակիցների վճարային հաշիվներից ելքագրում և մուտքագրում, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի հանձնարարականի հիման վրա:

12.5 Մասնակիցների վճարային հաշիվներից ելքագրում և մուտքագրում իրականացնելուց հետո Մասնակիցներին ներկայացնել տեղեկատվություն՝ վճարային հաշիվներից միջոցների ելքագրման և մուտքագրման վերաբերյալ:

12.6 Ապահովել հաշվարկային ծառայությունների անխափան մատուցումը:

12.7 Ապահովել գաղտնիք համարվող տեղեկությունների հավաքագրումը, մշակումը, պահպանումը և դրանց չիրապարակումը՝ սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.8 Կատարել սույն Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Հաշվարկային բանկն իրավունք ունի՝

12.9 Համակարգի օպերատորից ստանալ ցանկացած տեղեկատվություն, որն անհրաժեշտ է սույն Կանոններով սահմանված պարտականությունների պատշաճ իրականացման համար:

12.10 Իրացնել սույն Կանոններով սահմանված այլ իրավունքներ:

ԳԼՈՒԽ 13. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մասնակիցը պարտավոր է՝

13.1 Համակարգում գործունեություն իրականացնել համաձայն սույն Կանոնների,

13.2 Ինքնուրույն ապահովել իր տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունը միանալու Համակարգին և աշխատել Համակարգում օգտագործվող ծրագրային ապահովման միջոցով՝ Համակարգի կանոններով սահմանված կարգով,

13.3 Նախաձեռնել իր սպասարկման կետերի գրանցման գործընթացը և դրանց ցանկում փոփոխությունների իրականացումը՝ Համակարգի օպերատորին տրամադրելով իր սպասարկման կետերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ սույն կանոններով սահմանված կարգով,

13.4 Համակարգի օպերատորին նախապես տեղեկացնել իր սպասարկման կետերի աշխատանքային ժամերի և դրանց փոփոխությունների վերաբերյալ՝ սույն կանոններով սահմանված կարգով,

13.5 Համակարգի օպերատորի պահանջով՝ իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով և շրջանակներում փաստաթղթեր և տեղեկատվություն տրամադրել Համակարգի միջոցով իր կողմից իրականացված Դրամական փոխանցման գործառնությունների վերաբերյալ,

13.6 Համակարգի օպերատորի պահանջով՝ իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով և շրջանակներում տրամադրել վճարահաշվարկային փաստաթղթերի պատճենները և ցանկացած այլ

- տեղեկատվություն՝ կապված Համակարգի միջոցով Դրամական փոխանցման գործառնությունների իրականացման հետ,
- 13.7** Համակարգի օպերատորին անհապաղ տեղեկացնել իր պարտականությունների կատարման վրա ազդող ցանկացած գործոնի մասին,
- 13.8** Համակարգի օպերատորի պահանջով տեղեկատվություն տրամադրել իր, իր հիմնադիրների և իրական շահառուների վերաբերյալ,
- 13.9** Գործադրել առավելագույն ջանքեր՝ Համակարգի օպերատորի կողմից ուղարկված տեղեկացումներին (ծանուցումներին) պատշաճ կարգով ծանոթանալու և հետևելու ուղղությամբ,
- 13.10** Ունենալ առանձնացված ստորաբաժանում կամ նշանակված լիազոր անձ, որը պատասխանատու կլինի Համակարգի օպերատորի հետ համագործակցության համար,
- 13.11** Ընդունել և ուսումնասիրել Հաճախորդների դիմում-բողոքները և առավելագույնը 30 օրվա ընթացքում Հաճախորդին տեղեկացնել կայացված որոշման մասին՝ մինչև Հաճախորդին պատասխանելը ստանալով Համակարգի օպերատորի կարծիքը/դիրքորոշումը՝ սույն Կանոնների 17-րդ գլխով սահմանված կարգով և պայմաններով,
- 13.12** Հաճախորդներին ծանոթացնել դրամական փոխանցման գործառնությունների իրականացման պայմաններին սույն կանոններով, իր ներքին ընթացակարգերով և իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 13.13** Ապահովել Հաճախորդների սպասարկումն իր բոլոր սպասարկման կետերում,
- 13.14** Կատարել դրամական փոխանցման գործառնությունների իրականացման Հաճախորդների դիմումները իր կողմից սահմանված աշխատանքային ժամերի ընթացքում,
- 13.15** Բացառությամբ դրամական փոխանցման ուղարկման (Send-money) գործառնության համար գանձվող Միջնորդավճարի, հաճախորդներից այլ վճարներ չգանձել,
- 13.16** Ապահովել Համակարգի շրջանակներում իր կողմից իրականացվող բոլոր գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության ճիշտ և ամբողջական մուտքագրումը Համակարգի ծրագրային համակարգ,
- 13.17** Ապահովել իր երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում Համակարգի օպերատորի պահանջներին համապատասխան Հաճախորդի նույնականացումը՝ վերջինիս կողմից տրամադրված արժանահավատ և վավեր անձը հաստատող և այլ փաստաթղթերի հիման վրա,
- 13.18** Պահպանել դրամական փոխանցման գործառնությունների կատարումը հավաստող վճարահաշվարկային փաստաթղթերը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով, ինչպես նաև իրականացված Դրամական փոխանցման գործառնությունների վերաբերյալ այլ տեղեկատվություն՝ իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան 5 (հինգ) տարի,
- 13.19** Համակարգի միջոցով իրականացված դրամական փոխանցման գործառնությունների հետ կապված վիճահարույց իրավիճակի առաջացման դեպքում աջակցել Համակարգի օպերատորին,

այդ թվում նաև՝ տրամադրելով Համակարգի օպերատորի կողմից հայցվող տեղեկատվությունը և փաստաթղթերը,

- 13.20** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ, միջոցներ ձեռնարկել ՓԼ/ԱՖ նպատակով իրականացվող գործառնությունների կանխարգելման նպատակով, մերժել Հաճախորդների դիմումների կատարումը՝ սույն Կանոններով, իր ներքին ընթացակարգերով և իր երկրի օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով,
- 13.21** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով իր կողմից դրամական փոխանցման գործառնության կասեցման, մերժման կամ հաճախորդի դրամական միջոցների սառեցման կամ ապաստարանի դեպքում այդ մասին տեղեկացնել Համակարգի օպերատորին ոչ ուշ, քան նշված դեպքին հաջորդող աշխատանքային օրը,
- 13.22** Համակարգի օպերատորի պահանջով տրամադրել տեղեկատվություն և փաստաթղթեր՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջների պահպանման ու ՓԼ/ԱՖ կանխարգելման նպատակով,
- 13.23** Նախապես Համակարգի օպերատորի հետ գրավոր ձևով համաձայնեցնել Համակարգի օպերատորի և Համակարգի վերաբերյալ ցանկացած տեսակի տեղեկատվության, այդ թվում նաև՝ գովազդային տեղեկատվության, հրապարակումը,
- 13.24** Իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել տեղեկատվություն իր կողմից Համակարգի միջոցով դրամական փոխանցման գործառնությունների իրականացման հնարավորության վերաբերյալ,
- 13.25** Համակարգի օպերատորի հետ կնքած պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 1 ամսվա ընթացքում՝ ապահովել իր սպասարկման կետերում Համակարգում մասնակցության հետ կապված տեղեկատվության և գովազդային նյութերի տեղադրումը, այդ թվում նաև՝ Համակարգի ապրանքային նշանի տեղադրումը,
- 13.26** Ապահովել իր մոտ տեղադրված Համակարգի աշխատանքը ապահովող սարքավորումների, սերվերների, աշխատակայանների անվտանգությունը,
- 13.27** Ապահովել հաճախորդների անձնական տվյալների մշակումը և պաշտպանությունը՝ սույն կանոններով և իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 13.28** Ապահովել գաղտնիք համարվող տեղեկությունների հավաքագրումը, մշակումը, պահպանումը և դրանց չհրապարակումը՝ սույն կանոններով և իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 13.29** Սույն Կանոններով, Համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պատասխանատվություն կրել սույն կանոններով սահմանված կարգով,
- 13.30** Կատարել սույն Կանոններով, ՀՀ օրենսդրությամբ, Համակարգի օպերատորի հետ կնքած պայմանագրով սահմանված այլ պարտականություններ, այդ թվում նաև՝ ռիսկերի կառավարման նպատակով իրականացնել Համակարգի կանոններով սահմանված միջոցառումներ:

Մասնակիցն իրավունք ունի՝

- 13.31** Ձևակերպել (փաստաթղթավորել) դրամական միջոցների ընդունումն ու տրամադրումը իր երկրի օրենսդրության համաձայն՝ չհակասելով սույն կանոններին,

- 13.32** Ինքնուրույն սահմանել իր գործառնական օրը՝ այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացնում է Հաճախորդների սպասարկումը,
- 13.33** Ժամանակավորապես կասեցնել կամ դադարեցնել իր մասնակցությունը Համակարգին՝ սույն Կանոններով սահմանված կարգով,
- 13.34** Համակարգի օպերատորին ներկայացնել առաջարկություններ Համակարգի գործունեության բարելավման վերաբերյալ, Համակարգի օպերատորին դիտողություններ և բողոքներ ներկայացնել և հարցումներ ուղարկել՝ Համակարգի գործունեության վերաբերյալ,
- 13.35** Համակարգի օպերատորի համաձայնությամբ՝ ինքնուրույն մշակել, տարածել կամ հրապարակել գովազդային և այլ տեսակի տեղեկատվություն՝ Համակարգի ապրանքային նշանի կիրառմամբ,
- 13.36** Համակարգի օպերատորի համաձայնությամբ՝ գովազդային և տեղեկատվական նյութերում ներառել տեղեկատվություն Համակարգի միջոցով իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ,
- 13.37** Դրամական փոխանցման գործառնությունների իրականացման համար Ուղարկողից գանձել Միջնորդավճար՝ սույն Կանոններով սահմանված կարգով,
- 13.38** Ստանալ հասանելիություն՝ Համակարգում ձևավորված՝ իր միջոցով իրականացված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններին՝ սույն Կանոններով սահմանված կարգով,
- 13.39** Հարցում կատարել և ստանալ տեղեկատվություն դրամական փոխանցման գործառնության կարգավիճակի, միջնորդավճարի, Համակարգի գործունեության վերաբերյալ,
- 13.40** Համակարգի օպերատորից ստանալ ցանկացած տեղեկատվություն, որն անհրաժեշտ է Համակարգի կանոններով սահմանված պարտականությունների պատշաճ իրականացման համար,
- 13.41** Իրացնել սույն Կանոններով կամ Համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագրով սահմանված այլ իրավունքներ:

ԳԼՈՒԽ 14. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

- 14.1** Համակարգի և Մասնակիցների միջև կապն ապահովելու նպատակով Մասնակիցներին տրամադրվում են Համակարգի API-ի առանձնահատկությունները նկարագրող փաստաթղթեր և Համակարգի համապատասխան վեբ-կայքերին սահմանափակ հասանելիություն:
- 14.2** Համապատասխան պայմանագրերը կնքելուց հետո, դիմող կազմակերպությունը ձերք է բերում Համակարգի մասնակցի կարգավիճակ և Համակարգի օպերատորը կատարում է անհրաժեշտ տեխնոլոգիական, ընթացակարգերին համապատասխան գործողություններ մասնակցին համակարգին միացնելու և իրեն համապատասխան տեղեկությունները Համակարգի էլեկտրոնային գրադարանում ներարձելու համար, համապատասխան նույնացուցիչներով, որոնք թույլ են տալիս միանշանակ նույնականացնել մասնակցին:
- 14.3** Համակարգի եւ մասնակիցների միջև կապը տրամադրվում է երկու տեսակի միջերեսների միջոցով՝

- հեռակառավարման ինտեգրման ծառայության միջոցով (API), այս դեպքում մասնակիցները պետք է ինքնուրույն մշակեն և փորձարկեն մշակված ծրագիրը (կամ մոդուլները), օգտագործելով API համակարգի նկարագրությունը:
 - Ծրագրաշարի միջոցով, վեբ ինտերֆեյսի տեսքով, որն ունի ուղղակի համակարգերին դիմելու հնարավորություն ինտեգրացիոն ծառայությունների (API) միջոցով:
- 14.4** Համակարգը փակ համակարգ է և Մասնակիցների աշխատանքը ապահովվում է մասնակիցների կոնկրետ IP հասցեներին հասանելիության տրամադրումով, հիպերտեքստի փոխանակման անվտանգ պրոտոկոլով և անվտանգության հավաստագրերի կիրառմամբ, մասնակիցների և անվտանգության առանձնահատկությունները հաշվի առնելով կարող է օգտագործվել նաև VPN:
- 14.5** Համակարգում վճարային փաստաթղթերի և կարգադրությունների էլեկտրոնային եղանակով փոխանակումն իրականացվում է սպասարկման պաշտպանված եղանակներով, անվտանգության հավաստագրերի կիրառմամբ:
- 14.6** Անվտանգության հավաստագրերը ներկայացնում են իրենցից բաց բանալիների ենթակառուցվածքի վրա թողարկվող թվային հավաստագրեր և թողարկվում են Համակարգում գործող հավաստագրման կենտրոնի կողմից:
- 14.7** Մասնակցի կողմից ձևավորվում է հավաստագրման հարցում թվային ինքնության վկայական ստանալու համար, ինչի հիման վրա հավաստագրման կենտրոնը թողարկում է թվային հավաստագիրը:
- 14.8** Թվային հավաստագիրը տրամադրվում է Մասնակցի պատասխանատու ներկայացուցչին էլեկտրոնային փոստի միջոցով, նախապես գաղտնագրելով թվային հավաստագիրը պարունակող zip կամ rar արխիվը:
- 14.9** Արխիվի գաղտնաբառը տրամադրվում է Մասնակցի պատասխանատու ներկայացուցչին, ուղարկելով նրա բջջային հեռախոսահամարին sms հաղորդագրություն:
- 14.10** Թվային հավաստագրերը փոխվում են տարին մեկ անգամ:
- 14.11** Մինչ հավաստագրի գործողության ժամկետի լրանալը՝ երկու շաբաթ առաջ Համակարգի օպերատորի պատասխանատու անձը ձեռնարկում է միջոցառումներ Մասնակցի թվային հավաստագրի թարմացման (վերաթողարկման) համար:
- 14.12** Հավաստագրերի պահուստավորումը կատարվում է այլ կրիչների կամ կրիչներ պարունակող այլ սերվերի վրա:
- 14.13** Հավաստագրեր պարունակող կրիչների տարածքը գաղտնագրվում է գաղտնաբառով:
- 14.14** Մասնակցի սերվերի և API տրամադրող Համակարգի օպերատորի սերվերի միջև բոլոր տվյալների փոխանակումն իրականացվում է SSL (HTTPS) պաշտպանված կապի միջոցով: API հետ աշխատանքը բաց կապի (HTTP) միջոցով չի թույլատրվում:

- 14.15** Համակարգի վեբ-կայքի ֆրոնտ օֆիսի միջոցով Մասնակիցների աշխատակիցները հնարավորություն են ստանում նախաձեռնել Դրամական փոխանցման գործառնություններ, ստուգել դրամական փոխանցման գործառնության կարգավիճակը, կատարել Մասնակցի համար սահմանված այլ գործողություններ:
- 14.16** Համակարգի կառավարման վեբ-կայքի միջոցով Մասնակցի աշխատակիցները հնարավորություն են ստանում զուտ դեբետային սահմանաչափի սահմանման հայտ ներկայացնել, կատարել քլիրինգի և վերջնահաշվարկի վերաբերյալ հարցումներ, ստուգել դրամական փոխանցման գործառնության կարգավիճակը, տեղեկատվություն ստանալ դրամական փոխանցման գործառնությունների վերաբերյալ և կատարել Մասնակցի համար սահմանված այլ գործողություններ:
- 14.17** Համակարգում օգտագործվող սերվերները բաղկացած են՝ կիրառական սերվերներից, վեբ սերվերներից, տվյալների բազաներից, և միկրո ծառայություններ (Microservice) տրամադրող սերվերներից, որոնք ապահովում են բեռի բաշխում մուտքային հարցումները համակարգերում:
- 14.18** Կիրառական սերվերների ծրագրային բաղադրիչները բաղկացած են հետևյալ ծրագրերից.
- Գործառնությունների կիրառական ծրագիր, որն իրենից ներկայացնում է հիմնական ծրագրային միջոցների և մոդուլների ամբողջություն դրամական փոխանցման գործառնությունների իրականացման համար, որն իր մեջ ներառում է՝ Հաղորդագրությունների և փաստաթղթերի կառավարման մոդուլը, Գործառնությունների կատարման մոդուլը, WLF մոդուլը, Մասնակիցների կառավարման մոդուլը, Միջնորդավճարների կառավարման մոդուլը, Զուտ դեբետային սահմանաչափի մոնիտորինգի մոդուլը, Քլիրինգի իրականացման մոդուլը, Անվտանգության կառավարման մոդուլը և Հաշվետվությունների ու վիճակագրության մոդուլը:
 - Օգտագործողների կիրառական ծրագիր, որն իրենից ներկայացնում է ծրագրային մոդուլ Մասնակցի աշխատակցի և Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքի օգտագործողի հետ արտաքին ինտերֆեյսով աշխատելու համար:
 - Էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակման ծրագիր՝ Հաշվարկային բանկի հետ կապն ապահովելու նպատակով:
 - WLF ադմինիստրավորման վեբ-կայք, որը նախատեսված է Համակարգի օպերատորի կողմից Համակարգի միջոցով իրականացվող դրամական գործառնությունների մոնիտորինգի, պատշաճ ուսումնասիրության, սառեցման, մերժման կամ հաստատման համար,
 - Կարճ հաղորդագրություն ուղարկելու և ստանալու կիրառական ծրագիր, որը հնարավորություն է տալիս Համակարգի միջոցով կատարված դրամական փոխանցման գործառնությունների կարգավիճակի վերաբերյալ հաղորդագրություններ ուղարկել Հաճախորդներին,
 - Էլեկտրոնային փոստի կիրառական ծրագիր, որը նախատեսված է Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքի (www.unibank.am) միջոցով Հաճախորդների կողմից ներկայացված հարցերին Էլեկտրոնային փոստի միջոցով պատասխանելու, ինչպես նաև Մասնակիցներին տեղեկատվության (ծանուցման) ուղարկման համար:

- Հաշվետվությունների կիրառական ծրագիր, որը նախատեսված է Մասնակիցների կողմից հեշտ և հարմարավետ հաշվետվությունների ձևավորման համար՝ օգտագործելով ծրագրի գործիքակազմը:

14.19 Համակարգը բաղկացած է՝

- շտեմարաններից,
- հաճախորդներին սպասարկող ծրագրերից:

14.20 Հաշվետվության Համակարգը պետք է ապահովի՝

- հաշվետվությունների արդյունքների դիտում.
- ակտիվ հաշվետվությունների դիտում.
- օգտագործողների խմբերի կառավարում (ադմինիստրավորում),
- հաշվետվություններս պլանավորում, կառավարում:

14.21 Մոնիտորինգի ենթահամակարգը պետք է ավտոմատացնի Համակարգի օպերատորի և Մասնակիցների աշխատակայանների մոնիտորինգի գործընթացը, որը վերահսկելու է բոլոր առցանց գործարկները:

14.22 Մոնիտորինգի ենթահամակարգը պետք է ներկայացնի հետևյալ ակտուալ տեղեկատվություն՝

- բոլոր կատարված գործարկների մասին,
- պահպանված, բայց չուղարկված ֆինանսական եզրափակիչ գրանցամատյաններ,
- մասնակիորեն չուղարկված գրանցամատյանները (բաց եւ փակ),
- փոխանցումների և անդորրագրերի (ներառյալ ընդունված և չեղյալ հայտարարված) մասին:

14.23 Համակարգի API-ի միջոցով միացումը պարտադիր է Մասնակիցների համար, որոնք ապահովում են դրամական փոխանցումների իրականացումը բանկային հաշիվներին և վճարային քարտերին:

14.24 Դրամական միջոցների փոխանցման ծառայությունների հասանելիությունը տրամադրվում է Համակարգի օպերատորի կողմից օգտագործման համար ընդունված ծածկագրային տեղեկատվության պաշտպանության գործիքների միջոցով՝ էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ:

14.25 Համակարգի օպերատորի և Մասնակիցների միջև էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակումը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով՝ միավորված էլեկտրոնային հաղորդագրությունների փաթեթներում

14.26 Էլեկտրոնային հաղորդագրություններ (էլեկտրոնային հաղորդագրությունների փաթեթներ) ուղարկողներին և ստացողներին նույնականացնելու համար օգտագործվում բանկային կոդը, որը տրամադրվում է վերջիններիս ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

14.27 Էլեկտրոնային հաղորդագրությունը (էլեկտրոնային հաղորդագրությունների փաթեթը) ներառում է հետևյալ պարտադիր վավերապայմանները, որոնք թույլ են տալիս նույնականացնել տվյալ էլեկտրոնային հաղորդագրությունը (էլեկտրոնային հաղորդագրությունների փաթեթը)

- նույնականացման կողը (էլեկտրոնային ստորագրություն),
- էլեկտրոնային հաղորդագրության (էլեկտրոնային հաղորդագրությունների փաթեթի) հերթական համարը), որը եզակի է էլեկտրոնային հաղորդագրության յուրաքանչյուր հեղինակի համար գործառնական օրվա ընթացքում,
- էլեկտրոնային հաղորդագրության (էլեկտրոնային հաղորդագրությունների փաթեթի) կազմման ամսաթիվը:

14.28 Փոխանակման մասնակիցները պետք է ապահովեն էլեկտրոնային հաղորդագրություններում պարունակվող պատվերների, հայտարարությունների, հարցումների, պատասխանների, ծանուցումների վերարտադրման հնարավորությունը թղթային կրիչի վրա:

ԳԼՈՒԽ 15. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

15.1 Համակարգի օպերատորը և Մասնակիցները կազմակերպչական և/կամ ծրագրային միջոցների կիրառմամբ պետք է ապահովեն հետևյալ տեղեկատվական ակտիվների (էլեկտրոնային և/կամ թղթային տարբերակով պահպանվող տեղեկատվություն) պաշտպանությունը՝

- Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի և Մասնակիցների կողմից օգտագործվող ծածկագրման բանալիներ, հավաստագրեր և դրանց պահպանման, տեղադրման վերաբերյալ տեղեկատվություն,
- Մասնակիցների հաշիվների մնացորդների, շահույթի, վճարումների, փոխանցումների, քլիրինգային դիրքերի վերաբերյալ տեղեկատվություն,
- Համակարգից արտահանված թղթային կամ էլեկտրոնային կրիչներում պահպանված տեղեկատվությունը, հաշվետվությունները,
- Հաճախորդների սպասարկման ընթացքում լրացված Դրամական փոխանցման և ստացման դիմումները և Դրամական փոխանցման գործառնությունների կատարման անդորրագրերը, այլ վճարահաշվարկային փաստաթղթերը և դրանցում պարունակվող տեղեկատվությունը, այդ թվում եզակի հղման համարները,
- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով սահմանված տեղեկատվությունը և սույն Կանոններով սահմանված գաղտնիք համարվող այլ տեղեկությունները,
- Համակարգով դրամական փոխանցման գործառնությունների ապահովմանն առնչվող Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի և Մասնակցի կողմից կիրառվող ծրագրային ապահովման, կարգաբերումների, ցանցային ենթակառուցվածքի վերաբերյալ տեղեկատվությունը,
- Համակարգի շահագործման և տեղեկատվության մշակման, պահպանման, փոխանցման նպատակով օգտագործվող աշխատակայանները և սերվերները, ցանցային սարքավորումները,
- Կիրառվող ծրագրային ապահովումը, այդ թվում նաև Համակարգի հետ տեղեկատվության փոխանակման համար Մասնակցի կողմից մշակված ծրագրերը:

- 15.2** Բոլոր տեղեկատվական ակտիվները պարտադիր հաշվառվում են, ինչպես նաև սահմանվում են դրանց օգտագործման կանոնները:
- 15.3** Տեղեկատվական ակտիվները շահագործվում են սահմանափակ մատչելիության և վերահսկվող գոտիներում:
- 15.4** Համակարգի օպերատորի կողմից որպես տեղեկատվական ակտիվների անվտանգության ապահովման և պատշաճ շահագործման պատասխանատու հանդիսանում է Տեղեկատվական անվտանգության դեպարտամենտը: Համակարգի Մասնակիցներն ևս պարտավոր են ունենալ նմանատիպ գործառույթներ իրականացնող ստորաբաժանում:
- 15.5** Տեղեկատվական ակտիվների նկատմամբ իրավասությունները կասեցվում են համապատասխան աշխատողների աշխատանքային պարտականությունների փոփոխման կամ բացակայության դեպքերում:
- 15.6** Աշխատակիցների միջև տարանջատվում են տեղեկատվական անվտանգության ապահովման, ծածկագրման բանալիների կառավարման, սերվերների և աշխատակայանների ադմինիստրավորման, Համակարգի միջոցով դրամական փոխանցման գործառնությունների իրականացման գործառույթները:
- 15.7** Աշխատողների միջև տարանջատվում են տեղեկատվության մուտքագրման, տեղեկատվության հաստատման, իրավասությունների նշանակման, իրավասությունների հաստատման, թվային հավաստագրերի հաստատման գործողությունները:
- 15.8** Համակարգին միացված աշխատակայաններում և սերվերներում տեղադրված է հակավիրուսային պաշտպանությունն ապահովող համակարգ, որը պետք է պարբերաբար թարմացվի:
- 15.9** Համակարգին միացված աշխատակայաններում և սերվերներում տեղադրվում են առկա ծրագրային ապահովման անվտանգության թարմացումները:
- 15.10** Պետք է տեղադրված լինեն ոչ արտոնված հասանելիությունից պաշտպանող տեխնիկական միջոցներ:
- 15.11** Համակարգին միացված աշխատակայաններում և սերվերներում պետք է մշակված լինի և գործի վնասակար կոդի գործարկումը կանխող քաղաքականությունը:
- 15.12** Կանոնավոր կերպով պետք է տեղադրվեն Համակարգին միացված աշխատակայաններում և սերվերներում առկա ծրագրային ապահովման անվտանգության թարմացումները:
- 15.13** Համակարգին միացված աշխատակայանների և սերվերների ցանցային միացումներն այլ սերվերներին և աշխատակայաններին պետք է լինեն թույլատրված և փաստաթղթավորված:
- 15.14** Ցանցային հասանելիության տրամադրումը պետք է տարանջատված լինի ցանցային ադմինիստրատորի և աշխատակայանի կամ սերվերի ադմինիստրատորների միջև: Ցանցային հասանելիությունները պետք է կարգաբերված լինեն համաձայն թույլատրված հասցեների և միացման պորտերի:

- 15.15** Պետք է արգելափակված լինի համացանցից Համակարգին միացված աշխատակայաններին և սերվերներին հասանելիություն ստանալու հնարավորությունը:
- 15.16** Պետք է արգելափակված լինի Համակարգին միացված աշխատակայաններից և սերվերներից համացանցի այլ ռեսուրսների հասանելիությունը:
- 15.17** Համակարգի օպերատորի և մասնակիցների աշխատողները կարող են գործել Համակարգ միայն անհատականացված իրավասությունների միջոցով: Մուտք գործելու գաղտնաբառերը պետք է համապատասխանեն Մասնակիցների ներքին պահանջներին և պետք է ապահովվեն հետևյալը.
- գաղտնաբառում օգտագործել առնվազն 12 նիշ (գաղտնաբառը պարտադիր պետք է պարունակի՝ մեծատառեր, թվեր, հատուկ նիշեր),
 - գաղտնաբառը պարբերաբար փոխելու պահանջ (գաղտնաբառի փոփոխման հաճախականությունն առնվազն 60 օրը մեկ անգամ՝ նախկին երեք գաղտնաբառերից որևէ մեկի օգտագործման արգելքով),
 - գաղտնաբառի պաշտպանություն պահպանման և շահագործման ընթացքում:
- 15.18** Ադմինիստրատորի իրավասությունների ևս պետք է լինեն անհատականացված, պետք է ապահովվեն հետևյալը. դրանց գաղտնաբառերը պետք է ապահովվեն հետևյալը.
- գաղտնաբառում օգտագործել առնվազն 15 նիշ (գաղտնաբառը պարտադիր պետք է պարունակի՝ մեծատառեր, թվեր, հատուկ նիշեր),
 - գաղտնաբառը պարբերաբար փոխելու պահանջ (գաղտնաբառի փոփոխման հաճախականությունը առնվազն 45 օրը մեկ անգամ՝ նախկին գաղտնաբառերից որևէ մեկի օգտագործման արգելքով),
 - գաղտնաբառի պաշտպանություն պահպանման և շահագործման ընթացքում:
- 15.19** Տեղեկատվական անվտանգության հետ կապված բոլոր գործառույթների պատշաճ իրականացումը և դրանց նկատմամբ վերահսկողությունը Համակարգի օպերատորը և Մասնակիցներն ապահովում են ՀՀ օրենսդրության (արտասահմանյան մասնակցի դեպքում՝ նաև իր երկրի օրենսդրության) և իրենց ներքին իրավական ակտերին համապատասխան:
- 15.20** Համակարգում պահպանվող տեղեկատվության, ինչպես նաև օգտագործվող թվային հավաստագրերի չարտոնված փոփոխությունների, հեռացման, արտահոսքի դեպքերում Մասնակիցը պետք է անհապաղ ընդհատի Հաճախորդների սպասարկումը և տեղեկացնի Համակարգի օպերատորին:
- 15.21** Մասնակիցն ապահովում է Համակարգում օգտագործվող հավաստագրերի ձեռքբերման, փոփոխման գործընթացների կատարումը համաձայն գործող ընթացակարգերի (որոնք նախապես տրամադրվելու են Մասնակիցներին):
- 15.22** Համակարգի օպերատորը և Մասնակիցներն օգտագործում են գաղտնագրային տեղեկատվության պաշտպանության գործիքներ (գաղտնագրում) կամ գաղտնագրային տեղեկատվության պաշտպանության համար մոդուլներ պարունակող ծրագրային ապահովում և սարքաշար՝ տեղեկատվության պաշտպանության համար:

15.23 Համակարգն օգտագործում է էլեկտրոնային ստորագրության գործիքներ, որոնք իրականացնում են գաղտնագրման ալգորիթմներ՝ էլեկտրոնային ստորագրություն – RSA (բանալու երկարությունն առնվազն 1024 բիթ):

15.24 Համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մեջ օգտագործվող էլեկտրոնային ստորագրության վկայականներն ունեն 1 (մեկ) տարի գործողության ժամկետ և տրամադրվում են մասնակիցներին Համակարգի օպերատորի կողմից՝ Մասնակցի կողմից Համակարգի օպերատորին ուղղված պաշտոնական գրության հիման վրա:

15.25 Նշված հավաստագրերի ժամկետի ավարտից երկու շաբաթ առաջ Մասնակիցը նախաձեռնում է վկայագրերի փոփոխման գործընթացը՝ Համակարգի օպերատորին ուղարկելով համապատասխան պաշտոնական գրություն:

15.26 Համակարգի օպերատորը և Մասնակիցները պարտավոր են ապահովել տեղեկատվական անվտանգության պահանջների պահպանումը:

15.27 Բոլոր տեղեկատվական անվտանգության միջադեպերը գրանցվում են, յուրաքանչյուր միջադեպի վերաբերյալ պետք է փաստաթղթավորված լինեն վերջիններիս առաջացման պատճառների ուսումնասիրության արդյունքները և պլանավորվեն միջադեպի կրկնությունը կանխելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների իրականացման պլաններ:

15.28 Տեղեկատվական անվտանգության միջադեպ են համարվում՝

- իրավիճակներ, որոնք խոչընդոտել են կամ կարող են խոչընդոտել դրամական փոխանցման գործառնությունների իրականացմանը,
- իրավիճակներ, որոնք բերել են կամ կարող են բերել ոչ արտոնված դրամական փոխանցման գործառնությունների իրականացմանը,
- իրավիճակներ, որոնք բերել են կամ կարող են բերել խեղաթյուրված կամ կեղծ տվյալների օգտագործմամբ դրամական փոխանցման գործառնությունների իրականացմանը,
- ոչ արտոնված մուտք կամ մուտքի փորձ Համակարգ,
- Համակարգի տվյալների ոչ արտոնված օգտագործում, իրական տվյալների խեղաթյուրում, կեղծում կամ այլ կերպ փոփոխում,
- տրամադրված բաց բանալու հավաստագրերի կորուստ,
- այլ միջադեպեր, որոնք կարող են խոչընդոտել Համակարգի միջոցով Դրամական փոխանցման գործառնությունների բնականոն իրականացմանը:

15.23 Բոլոր գրանցված տեղեկատվական անվտանգության միջադեպերի մասին անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել Համակարգի օպերատորին և դրանց վերաբերյալ արձանագրությունները պարտադիր կերպով ուղարկել վերջինիս ոչ ուշ, քան միջադեպին հաջորդող աշխատանքային օրը՝ Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև կնքված պայմանագրում սահմանված համաձայնեցված կապի միջոցով:

ԳԼՈՒԽ 16. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

- 16.1** Համակարգում ռիսկերի ընդհանուր կառավարումն իրականացվում է Համակարգի օպերատորի կողմից, հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության պահանջները, և սույն Կանոններով սահմանված Համակարգի աշխատանքի առանձնահատկությունները:
- 16.2** Համակարգում ռիսկերի գնահատման և կառավարման գործառույթները բաշխվում են Համակարգի օպերատորի և Մասնակիցների միջև:
- 16.3** Մասնակիցները ռիսկերի կառավարումն իրականացնում են ինքնուրույն՝ հիմնվելով սույն Կանոնների և/կամ Համակարգի օպերատորի հետ կնքված Մասնակցության պայմանագրի վրա:
- 16.4** Համակարգի օպերատորն իրավունք ունի հսկողություն իրականացնել Մասնակցի կողմից ռիսկերի գնահատման և կառավարման մասով Համակարգի կանոններին հետևելու նկատմամբ:
- 16.5** Ռիսկերի կառավարման գործառույթի շրջանակներում՝ Համակարգի օպերատորն իրավասու է մշակել նաև ռիսկերի կառավարման ներքին փաստաթղթեր՝ ուղղված ռիսկերի կառավարման մոդելի բնութագրմանը, ռիսկերի կառավարման լրացուցիչ միջոցառումների ու մեթոդների սահմանմանը և այլ գործառույթների իրականացմանը:
- 16.6** Համակարգին բնորոշ հիմնական ռիսկերը հետևյալն են.
- 16.6.1** Ֆինանսական ռիսկ, որը բաժանվում է ըստ հետևյալ տեսակների.
- վարկային ռիսկ,
 - իրացվելիության ռիսկ,
 - հաշվարկային ռիսկ:
- 16.6.2** Գործառնական ռիսկ, որը բաժանվում է ըստ հետևյալ տեսակների.
- խարդախության ռիսկ,
 - սխալի ռիսկ,
 - Համակարգի հասանելիության խախտման և տեղեկատվության կորուստի ռիսկ,
 - ծրագրային ապահովման սխալների և վնասակար կոդի գործարկման ռիսկ,
 - Համակարգի անընդհատության խախտման ռիսկ.
- 16.6.3** Իրավական ռիսկ,
- 16.6.4** Բարի համբավի ռիսկ:
- 16.7 Համակարգում վարկային ռիսկի հնարավոր դրսևորումներն են՝**
- 16.7.1** Հաշվարկային բանկի վարկային ռիսկ, որը ստեղծում է և/կամ կրում է Հաշվարկային բանկը: Վարկային ռիսկը նվազեցնելու համար Հաշվարկային բանկը մասնակիցներին ընտրելու է զգուշավորությամբ, այսինքն որպես մասնակից կարող են հանդես գալ վերահսկվող և

Ֆինանսապես կայուն կազմակերպություններ, ինչպես նաև Հաշվարկային բանկը կարող է պահանջել Մասնակիցներից որոշակի գումարներ ստեղծել Հաշվարկային բանկում:

- 16.7.2** Հետաձգված հաշվարկների հետ կապված Ստացող կողմի վարկային ռիսկ, կապված նրա հետ, որ վերջինս կատարում է վճարում Հաճախորդին՝ մինչև վերջնահաշվարկի կատարումը և այս պարագայում Մասնակիցների համար կարող է առաջանալ վարկային ռիսկ, եթե վերջնահաշվարկը չկատարվի Հաշվարկային բանկի անվճարունակության պատճառով (ինչը պրակտիկորեն բացառված է), կամ Մասնակիցների հաշիվներում անբավարար միջոցների պատճառով: Վերջինիս հետ կապված ռիսկը նվազեցնելու համար Հաշվարկային բանկը մասնակիցներին ընտրելու է զգուշավորությամբ, այսինքն որպես մասնակից կարող են հանդես գալ վերահսկվող և ֆինանսապես կայուն կազմակերպություններ, ինչպես նաև Հաշվարկային բանկը կարող է պահանջել Մասնակիցներից որոշակի գումարներ ստեղծել Հաշվարկային բանկում:
- 16.7.3** Համակարգի օպերատորի հետ կապված վարկային ռիսկը, որի պարագայում Մասնակիցների վարկային ռիսկ կարող է առաջանալ Համակարգի օպերատորի կողմից Համակարգով ընդունված, բայց Ստացողներին դեռևս չտրամադրված դրամական միջոցների անօրինական յուրացման կամ դրանց ոչ համարժեք կառավարման/տեղաբաշխման, կամ այդ միջոցներով Համակարգի օպերատորի (այդ թվում՝ սնանկության դեպքում) այլ պարտավորությունների մարման արդյունքում: Տվյալ ռիսկը բացառվում է գործառնական ռիսկի կառավարման շրջանակներում կիրառվող միջոցառումների շնորհիվ, Համակարգի օպերատորի կողմից մշակված՝ դրամական միջոցների կառավարման ռիսկայնության նվազեցմանն ուղղված միջոցառումների շնորհիվ, ինչպես նաև այն հանգամանքով, որ Համակարգի օպերատորը պատասխանատվություն է կրում այդ միջոցների պահպանության համար:
- 16.7.4** Մասնակիցների սնանկության հետ կապված վարկային ռիսկը, որի պարագայում Մասնակիցների վարկային ռիսկ, ինչպես նաև իրացվելիության ռիսկ կարող է առաջանալ որևէ Մասնակցի սնանկության դեպքում»: Տվյալ ռիսկը բացառվում է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն: Բացի այդ, Համակարգի օպերատորի կողմից իրականացվող մոնիտորինգը պետք է նախօրոք բացահայտի անվճարունակության հատկանիշներ ունեցող Մասնակիցներին և դադարեցնի վերջիններիս մասնակցությունը Համակարգում սույն Կանոնների համաձայն,:
- 16.8** Իրացվելիության ռիսկն առաջանում է, երբ Համակարգում վերջնահաշվարկին մասնակցող կողմերից մեկը իր ենթակայության տակ չունի անհրաժեշտ և բավարար դրամական միջոցներ՝ պարտավորությունների կատարման համար: Տվյալ ռիսկը կարող է առաջանալ Մասնակիցների մոտ: Համակարգում վերը նշված ռիսկը չեզոքացնելու համար է Բանկն իր պարտականությունների շրջանակներում իրականացնելու է նաև չկարգավորված զուտ դեբետային դիրք ունեցող մասնակիցների վճարումների հետևանք, Բանկի սեփական միջոցներից հաշվարկների մասնակցին վարկի տրամադրում՝ հաշվարկների վերջնական իրականացման նպատակով:
- 16.9** Համակարգում Գործառնական ռիսկի հնարավոր դրսևորումներն են.

16.9.1 Խարդախության ռիսկը, որն իրենից ներկայացնում է Համակարգի օպերատորի, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կամ Մասնակցի աշխատակիցների և/կամ երրորդ անձանց ապօրինի գործողությունների, խարդախությունների կամ չարաշահումների հետևանքով Համակարգի օպերատորի, Մասնակիցների և/կամ Հաճախորդների միջոցների կորուստների հավանականությունը: Տվյալ ռիսկը կարող է առաջանալ Համակարգում կիրառվող ծրագրային ապահովման սխալների, խոցելիությունների, կարգաբեման, սարքավորումների, համակարգչային տեխնիկայի ֆիզիկական անվտանգության ապահովման, իրավասությունների կառավարման թերությունների առկայության պայմաններում: Համակարգի օպերատորի, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի կամ Մասնակցի աշխատակիցների և/կամ երրորդ անձանց կողմից ապօրինի գործողությունների կատարումը կարող է առաջացնել կարգադրությունների/հանձնարարականների ուղարկման և ստացման անհնարինության իրավիճակներ, Համակարգում պահպանվող և մշակվող տեղեկատվության ոչնչացման, փոփոխման, կեղծ կարգադրությունների/հանձնարարականների ստեղծման և կատարման դեպքեր: Դրանք կարող են հանգեցնել Համակարգի օպերատորի, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի և Մասնակիցների մոտ ֆինանսական կորուստների, բացասական ազդեցություն ունենալ վերջիններիս հեղինակության վրա: Խարդախության ռիսկը նվազեցնելու նպատակով կիրառվում են հետևյալ միջոցները.

- ֆիզիկական անվտանգության ապահովում՝ Համակարգի օպերատորի, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի և Մասնակցի մոտ տեղադրված Համակարգի աշխատանքը ապահովող սարքավորումների, սերվերների, աշխատակայանների համար, ինչպես նաև տեղեկատվության պահուստավորման ժամանակ,
- իրավասությունների կառավարման և իրադարձությունների գրանցման ապահովում՝ Համակարգում բոլոր տեսակի գործառնությունների մշակման բոլոր փուլերում,
- Համակարգի օպերատորի, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի և Մասնակցի աշխատակիցների պատասխանատվության ամրագրում՝ իրենց աշխատանքային պայմանագրերում, այդ թվում՝ աշխատակիցների կողմից գաղտնիության պահպանման համաձայնագրի ստորագրում,
- Համակարգի օպերատորի կողմից Մասնակիցներին խորհրդատվության, ինչպես նաև Համակարգի շահագործման վերաբերյալ փաստաթղթերի տրամադրում,
- Համակարգում մասնակիցների կողմից իրականացվող գործողությունների նկատմամբ հսկողության ապահովում,
- Տեղի ունեցած միջադեպերի գրանցում և համապատասխան վերլուծությունների իրականացում,
- Էլեկտրոնային ստորագրության կիրառում, որն ապահովում է մուտքագրված տեղեկատվության ամբողջականությունը և ստորագրող կողմի նույնականացումը,
- Համակարգի օպերատորի կողմից վտանգների գնահատում, համապատասխան ստուգումների անցկացում, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, Մասնակիցների մոտ, և

դրանց արդյունքների հիման վրա Համակարգի անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների պլանավորում և դրանց իրականացում,

- Համակարգի ադմինիստրավորման, շահագործման և անվտանգության ապահովման գործառույթների տարանջատում՝ համապատասխան աշխատակիցների միջև:

16.9.2 Սխալի ռիսկը, որն իրենից ներկայացնում է Համակարգի օպերատորի, Պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնի, Մասնակցի սխալի պատճառով իր կամ Համակարգի մեկ այլ Մասնակցի, Համակարգի օպերատորի և/կամ Հաճախորդի համար ֆինանսական միջոցների կորուստների կամ Համակարգի գործունեության հետ կապված այլ բացասական հետևանքների առաջացման հավանականություն: Սխալի ռիսկը նվազեցնելու նպատակով կիրառվում են հետևյալ միջոցառումները/մեխանիզմները՝

- Համակարգում սահմանված է էական տվյալների մուտքագրման/խմբագրման դեպքում «չորս աչքի» (երկակի վերահսկում) սկզբունքի կիրառման պահանջը,
- Համակարգ մուտքագրվող դիմումի պարտադիր լրացման ենթակա դաշտերը ավտոմատ կերպով ստուգվում են ծրագրային մակարդակով,
- Համակարգում կիրառվում է STP (Straight-through processing) մեխանիզմը, որն ապահովում է տեղեկատվության մեկանգամյա (նախաձեռնողի կողմից) մուտքի հնարավորություն, էլեկտրոնային հաղորդագրության ձևավորում և այնուհետև՝ դրա ավտոմատ ռեժիմում մշակում և փոխանցում Ստացող կողմին:

16.9.3 Համակարգի հասանելիության խախտման և տեղեկատվության կորուստի ռիսկը իրենից ներկայացնում է Համակարգի կամ Համակարգի որևէ ծառայության անհասանելիության հավանականություն, որը կարող է առաջանալ անհրաժեշտ միջոցների (մարդկային, ծրագրային, սարքավորումների) անբավարարության, կապի, սարքավորումների խափանման, ծրագրային ապահովման խափանման, տվյալների կորստի պատճառներով: Տվյալ ռիսկը նվազեցնելու նպատակով կիրառվում են հետևյալ միջոցառումները/մեխանիզմները՝

- տեղեկատվության փոխանցման համար այլընտրանքային կապուղիների առկայություն ապահովում;
- ռեզերվային կապի հանգույցի գործարկում;
- կապի հանգույցներում տեղադրված սարքավորումների ֆիզիկական անվտանգության և էլեկտրասնուցման այլընտրանքային աղբյուրներին միացած լինելու հետ կապված պահանջների ապահովում;
- կապի հանգույցներում տեղադրված սարքավորումների և համակարգերի նկատմամբ պրոֆիլակտիկ աշխատանքների կատարում;
- Մասնակցի կողմում տեղադրված ցանցային սարքավորումների, սերվերների և աշխատակայանների հասանելիության ապահովման պատասխանատվության և պարտականությունների ամրագրումը Համակարգի մասնակցության պայմանագրում (Service Level Agreement);

- Համակարգում մշակվող տեղեկատվության պահուստավորման և Համակարգի բաղադրիչների վերականգնման ընթացակարգերի և մեխանիզմների առկայությունը, պահուստային տվյալների ամբողջականության ստուգման ընթացակարգերի և մեխանիզմների առկայություն;
- Համակարգի օպերատորի կողմից վտանգների գնահատման իրականացում և գնահատման արդյունքների հիման վրա Համակարգի անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների պլանավորում և դրանց իրականացում;
- Համակարգի օպերատորի կողմից Համակարգի թողունակության պարբերաբար գնահատումների և մշտական մոնիտորինգի իրականացում, անհրաժեշտության դեպքում՝ օպերատիվ ձևով թողունակության բարձրացման ապահովում;
- Տեղեկատվական հենքերի, տվյալների և կապուղիների գաղտնագրման մեխանիզմների օգտագործում;
- Համակարգի օպերատորի համակարգիչների վրա USB և այլ արտաքին կրիչների օգտագործման ծրագրային կամ ապարատային սահմանափակումը;
- Համակարգի օպերատորի համակարգիչների վրա համացանցի հասանելիության սահմանափակման կիրառում;
- Իրադարձությունների մատյանի վարում /լոգավորում/, որտեղ կարտացուլվեն Մասնակիցների մուտք/ելքի, անհաջող մուտքերի փորձերի, կատարված գործարքների մասին տեղեկատվություն:

16.9.4 Ծրագրային ապահովման սխալների և վնասակար կոդի գործարկման ռիսկը, որն իրենից ներկայացնում է Համակարգում կիրառվող ծրագրային ապահովման սխալների, խոցելիության, համակարգերի սխալ կարգաբերումների, անվտանգության կանոնների խախտման, ինչպես նաև համակարգչային վիրուսների գործարկման, հակերային գրոհների պատճառով Համակարգի օպերատորի, Մասնակցի կամ Հաճախորդի համար ֆինանսական միջոցների կորուստների կամ Համակարգի գործունեության հետ կապված այլ բացասական հետևանքների առաջացման հավանականություն: Ծրագրային ապահովման սխալները և վնասակար կոդի գործարկումը կարող են առաջացնել Համակարգում կարգադրությունների/հանձնարարականների ուղարկման, ստացման կամ կատարման անհնարինություն, Գաղտնիք համարվող տեղեկությունների արտահոսք, պահպանվող և/կամ մշակվող տեղեկատվության ոչնչացման, դրանց փոփոխման դեպքեր: Վերջիններս կարող են հանգեցնել Համակարգի օպերատորի և Մասնակիցների մոտ ֆինանսական կորուստների, օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման, ինչպես նաև բացասական ազդեցություն ունենալ Մասնակիցների և Համակարգի օպերատորի և Հաճախորդների հեղինակության վրա: Վերոնշյալ ռիսկը նվազեցնելու նպատակով կիրառվում են հետևյալ միջոցները.

- Հակավիրուսային համակարգի օգտագործումը և արդիական վիճակում պահպանումը,
- Օպերացիոն համակարգերի անվտանգության թարմացումների անհապաղ տեղադրումը,

- Ծրագրային բաղադրիչների թարմացումների տեղադրումը,
- Հրապատերի, IPS և IDS համակարգերի կիրառումը և պատշաճ կարգաբերումը,
- Տեղեկատվական անվտանգության կանոնների վերաբերյալ դասընթացների անցկացումը Համակարգի հետ աշխատող մասնագետների շրջանում:

16.9.5 Համակարգի գործունեության անընդհատության խախտման ռիսկը, որն իրենից ներկայացնում է էկոլոգիական աղետների, երկրաշարժի և այլ բնույթի բնական կամ արհեստածին արտակարգ իրավիճակների հետևանքով Համակարգի անհասանելիության հավանականություն: Վերոնշյալ ռիսկը նվազեցնելու նպատակով կիրառվում են հետևյալ միջոցները՝

- Համակարգի օպերատորի կողմից Համակարգի գործունեության անընդհատության ապահովման պլանների մշակում՝ հիմնվելով ISO 27001:2013 միջազգային ստանդարտի վրա,
- Համակարգի գործունեության անընդհատության վերականգնման համար անհրաժեշտ պահուստային տարածքների առկայության ապահովում, դրանց տեխնիկական հագեցվածության և համապատասխան ենթակառուցվածքի առկայության ապահովում,
- Համակարգի գործունեության անընդհատության ապահովման պլաններով նախատեսված միջոցառումների և աշխատանքների պարբերաբար թեստավորում, այդ թվում՝ Մասնակիցների մասնակցությամբ,
- Ինտերնետի հասանելիության այլընտրանքային կապուղիների օգտագործումը և ավտոմատ կերպով փոխարինումը:

16.9.6 Իրավական ռիսկը կարող է առաջանալ ոչ հստակ, անորոշ, գերակայող իրավական ակտերին հակասող կամ սխալ ձևակերպած իրավական հիմքերի պատճառով, իսկ արտասահմանյան Մասնակիցների հետ կապված՝ նաև վերջիններիս երկրների իրավական ակտերի և ՀՀ իրավական ակտերի միջև հակասությունների հետևանքով: Այն պարագայում, երբ վճարահաշվարկային համակարգի մասնակիցների համար իրավական դաշտը և իրավահարաբերությունները ոչ հստակ կամ անորոշ են ձևակերպված, ապա վերջիններս չեն կարող հստակ գիտակցել Համակարգում առկա ռիսկերի նվազեցման և առաջացած ռիսկերի չեզոքացման համար իրենց պարտականությունները և իրավասությունները, այդ թվում՝ չեն կարող հստակ գիտակցել իրենց պատասխանատվության սահմանները՝ Համակարգի աշխատանքը անխափան ապահովելու համար:

16.9.7 Իրավական ռիսկերը նվազեցնելու նպատակով Համակարգի օպերատորի կողմից մշակվել են Համակարգի սույն կանոնները, ինչպես նաև կմշակվեն Համակարգի գործունեությունը կանոնակարգող մի շարք այլ փաստաթղթեր, ձեռնարկներ, որոնք վերաբերելու են Համակարգի գործունեությանը:

16.9.8 Իրավական որոշակիությունն ապահովվում է նաև Մասնակիցների հետ կնքվող, Համակարգին մասնակցության կամ համագործակցության համապատասխան պայմանագրերի միջոցով, որտեղ սահմանված են իրավասությունների, պարտավորությունների և

պատասխանատվության շրջանակները, ինչպես նաև վեճերի առաջացման դեպքում դրանց լուծման կարգը, պայմանները, կիրառվող օրենսդրությունը և վեճը լուծող դատական մարմինները:

16.9.9 Արտասահմանյան Մասնակիցների հետ կապված իրավական ռիսկերի նվազեցման համար Համակարգի օպերատորի կողմից գնահատվում է տվյալ Մասնակցի երկրի օրենսդրությունը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով սնանկության/անվճարունակության դեպքում պարտավորությունների կատարման դրույթներին:

16.9.10 Բարի համբավի ռիսկը Համակարգում կարող է առաջանալ վերը թվարկված յուրաքանչյուր ռիսկի հետևանքով, ինչպես նաև Մասնակիցների կողմից զուտ դեբետային սահմանաչափի ոչ պատշաճ կառավարման հետևանքով, որի դեպքում դրամական փոխանցման ուղարկումը (Send-money) կարող է մերժվել Համակարգի կողմից՝ զուտ դեբետային մնացորդի անբավարար լինելու պարագայում: Համակարգի խափանումները, սահմանված սպասարկման մակարդակի համաձայն ծառայությունների չմատուցումը կարող է բերել Համակարգի նկատմամբ Մասնակիցների և Հաճախորդների վստահության և տվյալ Համակարգի կիրառման նպատակահարմարության մակարդակի անկմանը, որն իր հերթին Մասնակիցների համար կարող է առաջացնել բարի համբավի ռիսկ: Տվյալ ռիսկերը նվազեցնելու համար կիրառվում են սույն գլխի համապատասխան ենթաբաժիններում նշված միջոցառումները:

16.9.11 Ռիսկերի կառավարման գործառույթը համակարգում իրականացնում է Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերության Ռիսկերի կառավարման տնօրինությունը:

ԳԼՈՒԽ 17. ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

17.1 Համակարգով մատուցված ծառայության վերաբերյալ վեճի առաջացման դեպքում Մասնակիցը ներկայացնում է համապատասխան դիմում Համակարգի օպերատորին՝ համաձայնեցված կապի միջոցով:

17.2 Դիմումը ստորագրվում է Մասնակցի ղեկավարի (լիազորված անձի) կողմից, կնքվում է Մասնակցի կնիքով և առնվազն պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

- Մասնակցի ամբողջական անվանումը և գրանցման հասցեն,
- տեղեկատվություն այն հանգամանքների մասին, որոնց վրա հիմնված է դիմումը՝ նշելով հղումներ ՀՀ օրենսդրությանը, սույն Կանոններին, մասնակցության պայմանագրին և/կամ այլ փաստաթղթերին, պահանջներին և (կամ) պայմաններին, որոնք խախտվել են դիմողի կարծիքով:

17.3 Դիմումին կարող են կցվել փաստաթղթեր, որոնք պարունակում են ներկայացված պահանջը հիմնավորող տեղեկություններ:

17.4 Դիմումը կարող է պարունակել նաև վեճը լուծելու համար հաշտեցման հանձնաժողով ստեղծելու առաջարկ:

17.5 Դիմումը պետք է ներկայացվի դիմումի մեջ նշված հիմքերի առաջանալուց հետո մեկ ամսվա ընթացքում և պարունակի նշում դրա ներկայացման համար հիմք հանդիսացող հանգամանքների, ինչպես նաև այդ հանգամանքների առաջացման օրվա վերաբերյալ: Նշված ժամկետից հետո ստացված դիմումները չեն դիտարկվում:

17.6 Համակարգի օպերատորի կողմից դիմումի քննարկման արդյունքների հիման վրա դիմումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի օպերատորը գրավոր տեղեկացնում է Մասնակցին հետևյալ որոշումներից մեկի մասին՝

- դիմումը բավարարելու մասին (ամբողջությամբ կամ մասնակի) ,
- դիմումը մերժելու մասին,
- դիմումը քննարկելու համար հաշտեցման հանձնաժողով ստեղծելու մասին:

17.7 Նախորդ կետում նշված ժամկետում դիմումի քննարկումը կարող է կասեցվել Համակարգի օպերատորի կողմից, եթե անհրաժեշտ է ձեռք բերել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ: Այդ նպատակով Համակարգի օպերատորը կարող է Մասնակցին առաջարկություն ուղարկել՝ ներկայացնելու լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկատվություն՝ նշելով դրանց ներկայացման վերջնաժամկետը: Համակարգի օպերատորի առաջարկով սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը կամ տեղեկությունները չստանալու դեպքում դիմումը քննարկվում է առկա փաստաթղթերի հիման վրա:

17.8 Հաշտեցման հանձնաժողով ստեղծելու դեպքում դրա կազմում ներառվում են հավասար թվով ներկայացուցիչներ Համակարգի օպերատորից և Մասնակցից, բայց ոչ ավելի, քան երեք հոգի յուրաքանչյուր կողմից: Հաշտեցման հանձնաժողովում կարող են ընդգրկվել նաև անկախ մասնագետներ (երեք հոգուց ոչ ավել) այն կազմակերպություններից, որոնք չեն ներկայացնում կողմերից որևէ մեկը:

17.8 Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվում է մինչև 10 աշխատանքային օր ժամկետով: Անհրաժեշտության դեպքում, Համակարգի օպերատորի և Մասնակցի համատեղ որոշման հիման վրա հաշտեցման հանձնաժողովի աշխատանքային ժամկետը կարող է երկարացվել մինչև 30 աշխատանքային օր:

17.9 Աշխատանքի արդյունքների հիման վրա հաշտեցման հանձնաժողովը կազմում է ակտ, որը պարունակում է.

- դիմումի ներկայացման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկարագրությունը.
- հաշտեցման հանձնաժողովի անդամների կատարած աշխատանքների նկարագրությունը.
- եզրակացություն՝ հիմնված հաշտեցման հանձնաժողովի աշխատանքի արդյունքների և դրա հիմնավորման վրա,
- հայցի քննարկման արդյունքներով կայացված որոշում:

17.10 Ակտը կազմվում է երկու օրինակից և ստորագրվում է հաշտեցման հանձնաժողովի բոլոր անդամների, այդ թվում՝ այլ կարծիք ունեցողների կողմից:

17.11 Հաշտեցման հանձնաժողովի անդամները, ովքեր համաձայն չեն կայացված որոշման հետ, իրավունք ունեն հայտնելու հատուկ կարծիք, որը կցվում է ակտին:

17.12 Ստորագրված ակտի մի օրինակը մնում է Համակարգի օպերատորի մոտ, մյուսը տրամադրվում է Մասնակցին:

ԳԼՈՒԽ 18. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

18.1 Համակարգի անգործունակության ռիսկի բարձրացումը կանխելուն ուղղված միջոցառումներ ժամանակին ձեռնարկելու նպատակով Մասնակիցներն անհապաղ տեղեկացնում են Համակարգի օպերատորին առաջացած արտակարգ իրավիճակների մասին:

18.2 Համակարգի Օպերատորին տեղեկացումն իրականացվում է Մասնակցի կողմից համաձայնեցված եղանակով, իսկ դրա անհնարինության դեպքում ցանկացած հասանելի եղանակով՝ ֆաքս, էլեկտրոնային հաղորդագրություն, բացառիկ դեպքերում՝ հեռախոսային կապի միջոցով:

18.3 Ծագած արտակարգ իրավիճակների մասին հաղորդագրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- դեպքի ամսաթիվը, ժամը
- դեպքի բնույթը,
- պատճառները (եթե այդպիսի պատճառները հայտնի են հաղորդագրության պատրաստման պահին),
- արտակարգ իրավիճակի հետևանքները,
- վերականգնման կանխատեսվող ժամանակը՝ այն դեպքում, երբ արտակարգ իրավիճակի հետևանքով խաթարվել է դրամական փոխանցումների գործունեությունը աջակցող ծրագրային ապահովման և սարքավորումների աշխատանքը, ինչպես նաև ծրագրային ապահովման և ապարատային համակարգի աշխատանքի խափանումները վերացնելու ուղիները:

18.4 Մասնակիցը տեղեկացնում է Համակարգի օպերատորին խափանումների և արտակարգ իրավիճակի հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների մասին:

18.5 Եթե խնդիրն առաջացել է համակարգի օպերատորի մոտ, Համակարգի օպերատորը տեղեկացնում է Մասնակիցներին արտակարգ իրավիճակի/գործառնական խափանումների առաջացման, դրանց պատճառների և հետևանքների մասին:

18.6 Համակարգի օպերատորը տեղեկացնում է արտակարգ իրավիճակներում Համակարգի ծառայությունների մատուցման առանձնահատկությունների մասին, ներառյալ.

- պահեստային ավտոմատացված համակարգերի օգտագործման մասին՝ նշելով դրանց օգտագործման անցման ամսաթիվը և ժամը,
- Համակարգի ծառայությունների ցանկի մասին, որոնք տրամադրվում են պահեստային ավտոմատացված համակարգերի միջոցով,
- օգտագործվող էլեկտրոնային հաղորդագրությունների ցանկի և ձևաչափերի մասին,
- գործառնական խափանումը վերացնելուց հետո Համակարգի բնականոն գործունեությունը վերսկսելու մոտավոր ժամկետի մասին:

18.7 Եթե Մասնակիցը վեճեր ունի իր հաճախորդների հետ, ապա Մասնակիցն ինքնուրույն և իր հաշվին լուծում է այդ վեճերը՝ կապված միջոցների փոխանցման հետ կապված խնդիրների, տեխնոլոգիական աջակցության բացակայության, ինչպես նաև Մասնակցի կամ նրա կողմից ներգրավված երրորդ անձանց գործողություններով (անգործությամբ) պատճառված այլ պատճառներով:

18.8 Վիճահարույց, ոչ ստանդարտ, արտակարգ իրավիճակների դեպքում, այդ թվում՝ իր սարքավորումների շահագործման մեջ համակարգի և տեխնոլոգիական խափանումների դեպքում, Մասնակիցը պարտավոր է այդ մասին և հնարավոր պատճառների ու հետևանքների մասին՝ անհապաղ տեղեկացնել Համակարգի օպերատորին՝ ուղարկելով. նրան էլեկտրոնային փոստով հաղորդագրություն, որին հաջորդում է գրավոր ծանուցում ուղարկելը:

18.9 Մասնակցի ծանուցումը ստանալուց հետո Համակարգի օպերատորը, անհրաժեշտության դեպքում, այդ մասին տեղեկացնում է Համակարգի մյուս Մասնակիցներին:

18.10 Համակարգի օպերատորը սահմանում է հետևյալ պահանջները Մասնակիցների կողմից ուղարկված տեղեկատվության բովանդակության, ձևի և ներկայացման հաճախականության համար՝ դրամական փոխանցումներ կատարելիս տեղեկատվական անվտանգության համակարգում

անվտանգությունը վերլուծելու, ինչպես նաև փոխգործակցության նպատակով՝ տեղեկատվական անվտանգության ոլորտում միջադեպերի հայտնաբերման դեպքում (տեղեկատվությունը տրամադրվում է միայն Համակարգի գործունեության վերաբերյալ)։

Բովանդակությունը	Ձևաչափը	Պարբերականությունը
1) տեղեկատվական անվտանգության պահանջներին համապատասխանության վերաբերյալ, ներառյալ՝ իրականացված համապատասխանության գնահատման արդյունքների վերաբերյալ	Համակարգի օպերատորի կողմից անցկացված պաշտոնական գրություն և/կամ էլեկտրոնային հարցում	Համակարգի օպերատորի պահանջով՝ տարին մեկ անգամ
2) տեղեկատվական անվտանգության ապահովման կարգի իրականացման վերաբերյալ	Համակարգի օպերատորի կողմից անցկացված պաշտոնական գրություն և/կամ էլեկտրոնային հարցում	Համակարգի օպերատորի պահանջով՝ տարին մեկ անգամ
3) տեղեկատվական անվտանգության ապահովման գործում հայտնաբերված սպառնալիքների և խոցելիության մասին	օպերատիվ կարգով՝ էլեկտրոնային հաղորդագրության և/կամ զանգի միջոցով՝ չարտոնված մուտքի, առանց հաճախորդի համաձայնության գործողությունների իրականացման դեպքերում	Հայտնաբերման դեպքում
4) տեղեկատվական անվտանգության պահանջների խախտման հետ կապված բացահայտված միջադեպերի մասին	օպերատիվ կարգով՝ էլեկտրոնային հաղորդագրության և/կամ զանգի միջոցով՝ չարտոնված մուտքի, առանց հաճախորդի համաձայնության գործողությունների իրականացման դեպքերում	Հայտնաբերման դեպքում

5) օգտագործվող ծածկագրային տեղեկատվության պաշտպանության միջոցների մասին	Պաշտոնական գրություն	Ծածկագրային տեղեկատվության պաշտպանության միջոցների օգտագործումը սկսելու կամ դրանց փոփոխման օրվանից կամ Օպերատորի պահանջով ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում

18.11 Համակարգի օպերատորը Համակարգի ներսում դրամական փոխանցումներ կատարելիս տեղեկատվական անվտանգության պահանջների խախտման հետ կապված միջադեպերի հայտնաբերման դեպքում փոխգործակցության համար սահմանում է հետևյալ պահանջները.

Միջադեպեր	Մասնակցի գործողությունները	Համակարգի օպերատորի գործողությունները
1) Միջադեպերի հայտնաբերման դեպքում	Տեղեկացնում է իր համապատասխան ստորաբաժանմանը միջադեպերի հայտնաբերման մասին; հայտնաբերված միջադեպերի գրանցում; պատշաճ արձագանքել հայտնաբերված միջադեպերին, ներառյալ իրավապահ մարմիններին դիմելը՝ անհրաժեշտության դեպքում; բացահայտված միջադեպերի պատճառների վերլուծություն, միջադեպերի արձագանքման արդյունքների գնահատում; հայտնաբերված միջադեպերի մասին անհապաղ տեղեկացնել Համակարգի օպերատորին; տեղեկատվական ենթակառուցվածքի բնականոն	Ձեռնարկում է բոլոր հնարավոր և գործողություններ՝ հայտնաբերված միջադեպերի հետևանքների նվազագույնի հասցնելու ուղղությամբ; ստացողների կողմից միջոցների օգտագործման հնարավորության կասեցում՝ այդ միջոցները տնօրինելու իրավունք չունեցող անձանց պատվերով միջոցների փոխանցումներ բացահայտելու դեպքում; ստուգում է տեղեկատվության պաշտպանության և փոխանցումների մշակման ժամանակ համապատասխանությունը պահանջներին; կատարված գործողությունների արդյունքների մասին

	գործունեության վերականգնման իրականացում	տեղեկացնում է Մասնակցին: Համակարգի օպերատորը վերլուծում է ստացված տեղեկատվությունը՝ համոզվելու համար, որ Համակարգում ապահովված է տեղեկատվական անվտանգությունը, անհրաժեշտության դեպքում ձևակերպում է տեղեկատվական անվտանգության բարելավման վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև վերլուծության հիման վրա փոփոխություններ է կատարում տեղեկատվական անվտանգության պահանջներում:
2) Կրիպտոգրաֆիկ պաշտպանության միջոցների հիմնական տեղեկատվության խախտման փաստը բացահայտելիս	Համակարգի օպերատորին տեղեկացում՝ համաձայնեցված եղանակով	Արգելափակում է Համակարգում փոխանցումներ կատարելու Մասնակցի հնարավորությունը
3) Վնասակար կոդի կամ վնասակար կոդի ազդեցության հայտնաբերման դեպքում	Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում վնասակար կոդի տարածումը կանխելու և հետևանքները վերացնելու համար: Անհրաժեշտության դեպքում կասեցվում են դրամական փոխանցումները՝ վնասակար կոդով վարակման հետևանքների վերացման ժամանակահատվածի համար: Համակարգի օպերատորին տեղեկացում՝ համաձայնեցված եղանակով	Մասնակցից հաղորդագրություն ստանալուց հետո ժամանակավորապես դադարեցնում է Մասնակցի աշխատանքը Համակարգում: Համակարգի աշխատանքի հետ կապված խնդիրների դեպքում հաղորդագրություններ է ուղարկում Մասնակիցներին՝ համաձայնեցված եղանակով: Համակարգում վնասակար կոդի հայտնաբերման կամ

		վնասակար կողի ազդեցության փաստի առկայության դեպքում Օպերատորը տեղեկացնում է Մասնակիցներին՝ համաձայնեցված եղանակով:
--	--	--

ԳԼՈՒԽ 19. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

19.1 Համակարգի օպերատորը, սույն Կանոններով և համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում Համակարգի Մասնակիցների կողմից սույն Կանոններով և Համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ:

19.2 Համակարգի օպերատորի կողմից սույն Կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը իրականացվում է անհրաժեշտության դեպքում Մասնակիցներից ֆինանսական հաշվետվություններ, այլ հաշվետվություններ, վիճակագրական տվյալներ կամ Համակարգի գործունեության հետ կապված ցանկացած այլ փաստաթղթեր (այդ թվում՝ Հաճախորդների կամ այլ անձանց դիմում-բողոքներ) պահանջելու և դրանք դիտարկելու (ուսումնասիրելու, վերլուծելու) միջոցով: Համակարգի օպերատորը Մասնակիցներից կարող է պահանջել նշված հաշվետվությունները կամ տեղեկությունները ներկայացնել ողջամիտ ժամկետում՝ համապատասխան հարցման մեջ նշելով ներկայացման ժամկետը՝ կախված պահանջվող տեղեկատվության ծավալից:

19.3 Անհրաժեշտության դեպքում Համակարգի օպերատորի պահանջով Մասնակիցներն առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են սույն Կանոններով սահմանված պահանջների պահպանման, Մասնակիցների և Հաճախորդների միջև վիճահարույց իրավիճակների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն Համակարգի Մասնակցի կողմից Համակարգի միջոցով կատարված գործառնությունների վերաբերյալ:

19.4 Սույն Կանոնների 19.3 կետով սահմանված տեղեկությունները կամ փաստաթղթերը չտրամադրելը կարող է դիտվել որպես Մասնակցի կողմից սույն կանոնների խախտում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկությունների չտրամադրումը (այդ թվում՝ ոչ ամբողջական կամ անարժանահավատ) չի հակասում սույն Կանոններին կամ Մասնակցի երկրի օրենսդրությանը:

19.5 Սույն գլխով նախատեսված կանոնների խախտումներ հայտնաբերելու դեպքում Համակարգի օպերատորն այդ մասին տեղեկացնում է Մասնակցին և տրամադրում է ողջամիտ ժամկետ՝ խախտումը վերացնելու համար, որի ընթացքում տվյալ խախտումը չվերացնելու դեպքում Համակարգի օպերատորը կարող է կասեցնել կամ դադարեցնել Մասնակցի մասնակցությունը Համակարգին:

ԳԼՈՒԽ 20. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- 20.1** Համակարգի օպերատորն իրավասու է միակողմանիորեն փոփոխություններ իրականացնել սույն Կանոններում:
- 20.2** Կանոններում փոփոխությունների իրականացումը հաստատվում է Համակարգի օպերատորի իրավասու մարմնի կողմից և հրապարակվում է Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ www.ubpay.am:
- 20.3** Համակարգի օպերատորն ապահովում է Մասնակիցների կողմից՝ սույն Կանոններում նախատեսվող փոփոխություններին ծանոթացման և կարծիքի ներկայացման հնարավորությունը՝ հրապարակելով փոփոխությունների իրականացման նախագիծը Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում և տեղեկացնելով այդ մասին Մասնակիցներին: Մասնակիցներն իրավունք ունեն ներկայացնելու իրենց կարծիքը Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում փոփոխությունների իրականացման նախագծի հրապարակումից հետո 15 օրվա ընթացքում:
- 20.4** Համակարգի օպերատորն ապահովում է փոփոխված կանոնների նախագծի վերջնական տարբերակի կամ փոփոխված կանոնների հաստատված տարբերակի հրապարակումը Համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթվից առնվազն 30 օր առաջ: Մասնակիցները համարվում են պատշաճ ձևով տեղեկացված՝ Համակարգի օպերատորի կողմից Մասնակիցներին մասնակցության կամ համագործակցության պայմանագրերով սահմանված կապի միջոցով փոփոխված կանոնների նախագծի վերջնական տարբերակի կամ փոփոխված կանոնների հաստատված տարբերակի տրամադրումից հետո:
- 20.5** Մասնակցի կողմից Համակարգի օպերատորին պաշտոնական ձևով ուղարկված՝ Կանոններում իրականացված փոփոխությունների հետ կապված անհամաձայնության վերաբերյալ նամակը հիմք է Մասնակցի հետ կնքած Մասնակցության պայմանագիրը լուծելու համար:

ԳԼՈՒԽ 21. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 21.1** Սույն Կանոնները մշակված են ՀՀ օրենսդրության համաձայն և կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Սույն կանոնների դրույթների կիրառման արդյունքում ծագող վեճերի կամ Համակարգին մասնակցությունից բխող վեճերի լուծման համար կիրառելի օրենսդրություն է համարվում ՀՀ օրենսդրությունը, եթե այլ բան նախատեսված չէ Համակարգի օպերատորի և Մասնակիցների միջև կնքված մասնակցության պայմանագրերով:
- 21.2** Համակարգի Մասնակիցները պատասխանատվություն են կրում սույն Կանոններով կամ Համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերով, ինչպես նաև Մասնակցի և Համակարգի օպերատորի միջև կնքված մասնակցության պայմանագրով սահմանված պահանջների խախտման՝ դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- 21.3** Համակարգի սուբյեկտներն ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը պայմանավորված է եղել անհաղթահարելի ուժի ազդեցությամբ:

21.4 Անհաղթահարելի ուժի հիմքում ընկած հանգամանքների ի հայտ գալու դեպքում Մասնակիցների գործողությունների կարգն ու պայմանները նախատեսվում են Համակարգի օպերատորի և Մասնակիցների միջև կնքված համապատասխան պայմանագրերով: